

# Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղեցույց

2025

# Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղեցույց

## Արա Ղազարյան

*Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի ֆինանսական օժանդակության շնորհիվ «Արդարացի դատախազական բարեփոխումներ» ծրագրի շրջանակում: Հետազոտության մեջ տեղ գրած վերլուծություններն արտահայտում են հեղինակների տեսակետը և կարող են չհամընկնել ժողովրդավարության զարգացման հիմնադրամի դիրքորոշումների ու տեսակետների հետ:*

2025թ.

## Բովանդակություն

Նախաբան.....	3
1. Գույքի բռնագրավման ու բռնագանձման իրավական կառուցակարգերը.....	6
2. Միջազգային իրավական փաստաթղթեր.....	9
3. Այլ երկրների քաղաքացիական բռնագանձման ընթացակարգերը.....	14
4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքը.....	21
5. Բռնագանձման առարկան. գույք և եկամուտներ.....	23
6. Իրավախախտման սուբյեկտները.....	28
7. Նախորդող հանցագործություններ.....	30
8. Գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և ապացույցները.....	32
9. Վարույթի տևողությունը և ուսումնասիրության ժամանակահատվածը.....	36
10. Վարույթի փոխհատվելիությունը քրեական վարույթի հետ.....	39
11. Ապահովման միջոցների և բռնագանձման համաչափությունը.....	56

## Նախաբան

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենքները լայն տարածում ունեն աշխարհի տարբեր երկրներում: Այդ օրենքներն այլ կերպ կոչվում են առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման կամ քաղաքացիական բռնագանձման օրենքներ: Դրանք համարվում են կազմակերպված հանցավորության, կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետ կառուցակարգեր: Ի տարբերություն մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավման քրեական վարույթների, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման վարույթներում բացակայում են մի շարք խնդրահարույց գործոններ, օրինակ՝ մեղադրական դատավճռի անհրաժեշտությունը գույքի բռնագանձման համար, քրեական գործի կարճումը վաղեմության ժամկետի, գույքի սեփականատիրոջ մահվան, մեղադրյալի փախուստի դիմելու, այլ ոչ արդարացման հիմքերով: Էական դժվարություններ են առաջացնում նաև քրեական դատավարության երաշխիքները, օրինակ, անմեղության կանխավարկածը, մեղքի ապացուցման բարձր շեմը, մեղադրանքից պաշտպանվելու մեղադրյալի իրավունքները, որոնք պետք է հաղթահարվեն քրեական հետապնդման մարմնի կողմից, ինչպես նաև այլ վարույթային առանձնահատկություններ, որոնք հատուկ են քրեական դատավարությանը և որոնց պատճառով քրեական դատավարության կարգով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագրավումը հաճախ մնում է անավարտ, տևում է երկար, կամ հնարավոր չի լինում իրականացնել հանցավոր ծագում ունեցող ամբողջ գույքի բռնագրավում: Ի տարբերություն այս խոչընդոտների, քաղաքացիական բռնագանձման վարույթը ունի բազմաթիվ առավելություններ: Նախ, դասական իմաստով վարույթը հարուցվում է ոչ թե անձի, այլ գույքի դեմ: Պատկերավոր ասած, իրավախախտը ոչ թե անձն է, այլ գույքը, որը ներգրավվել է անօրինական գործարքներում: Այդ հանգամանքն արդեն իսկ բացառում է անհատական իրավունքների առկայությունը ու դրանք հաղթահարելու անհրաժեշտությունը վարույթի ընթացքում: Բացի այդ, եթե որևէ մեկը հայցում է գույքի նկատմամբ անհատական գույքային իրավունքներ (օգտագործման, տնօրինման, տիրապետման, նախապատվության և այլ գույքային իրավունքներ), դատարանը պարտավորված չէ կենտրոնանալ այդ իրավունքների վրա, քանի որ դատավարության առարկան, ի վերջո, վերաբերում է գույքին, ոչ թե գույքի նկատմամբ անձնական իրավունքներին: Թեև քաղաքացիական բռնագանձման վարույթը ինքնին միջամտություն է անձի մասնավոր գույքային իրավունքներին, ու նման պարագայում դատարանները պարտավոր են փոխհավասարակշռել մասնավոր գույքային իրավունքները վարույթի

հանրային նպատակների հետ, դատարանը, այդուհանդերձ, պարտավոր չէ կենտրոնանալ գույքային իրավունքի հարցի լուծման վրա, քանի որ քաղաքացիական բռնագանձման վարույթով դատարանը լուծում է գույքի կարգավիճակի հարցը, ոչ թե գույքի նկատմամբ որևէ անձի իրավունքների ու պարտականությունների մասին հարցեր:

Էական առավելություն է համարվում նաև այն, որ քաղաքացիական բռնագանձման վարույթն իրականացվում է գույքի ապօրինի ծագման կանխավարկածի հիման վրա, ըստ որի այն պահից, երբ հայցվորը (հանրային մարմինը) հիմնավորում է, որ գույքի ծագումը չի հիմնավորվում օրինական եկամուտներով, գույքի օրինականության ապացուցման պարտականությունն ինքնաբերաբար տեղափոխվում է պատասխանող կողմի վրա, ու այս կարգը գործում է դատավարության ողջ ընթացքում: Դա հանրային մարմինն ազատում է էական դատավարական բեռից, մինչդեռ քրեական դատավարությունում ապացուցման պարտականությունը դատավարության ողջ ընթացքում կրում է հանրային մարմինը: Էական առավելություն է նաև այն, որ քաղաքացիական բռնագանձման վարույթում ապացուցման շեմն էապես ցածր է, քան քրեական դատավարությունում: Եթե քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է ապացուցել գույքի ապօրինի ծագման հավանականությունը, որն արվում է «հավանականությունների հավասարակշռում» ապացուցման չափանիշով, քրեական դատավարությունում ապացուցման ենթակա է գույքի ապօրինի ծագման իրականությունը՝ ողջամիտ կասկածից վեր ապացուցման չափանիշով: Ավելի դյուրին է ապացուցել գույքի ապօրինի ծագում ունենալու հավանականությունը, քան իրականությունը, ու դա ավելի մատչելի է «հավանականությունների հավասարակշռման», քան «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափանիշով: Նշված բոլոր պատճառներով պայմանավորված, քաղաքացիական բռնագանձման մասին օրենքները լայնորեն տարածվում են տարբեր պետություններում և միջազգային հարաբերություններում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը զարգացրել է ծավալուն նախադեպային իրավունք քաղաքացիական բռնագանձման վերաբերյալ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի (արդար դատաքննության իրավունք և անմեղության կանխավարկած), 7-րդ հոդվածի (պատիժ բացառապես օրենքի հիման վրա), 8-րդ հոդվածի (անձնական կյանքի հարգման իրավունք), Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի (գույքային իրավունքներ) հիմքերով: Դատարանի մեկնաբանություններում կենտրոնական տեղ է գրավում հանցավորության դեմ պայքարի հանրային շահի համադրումը հիմնական անհատական իրավունքների հետ, ու այս առումով դատարանը շարունակ զարգացնում է իր նախադեպային իրավունքը՝ ձգտելով ներդաշնակեցնել

քաղաքացիական բռնազանձման ինստիտուտը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի պահանջների հետ, միևնույն ժամանակ զարգացնելով իր սեփական նախադեպային իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական բռնազանձման ինստիտուտը նորույթ է: Այն ամրագրվել է իրավական համակարգում «[Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին](#)» օրենքով, որն ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 23-ին: Թեև օրենքի ընդունման պահից այն ակտիվորեն կիրառվում է, բացակայում է ձևավորված դատական պրակտիկա, կայուն, հաստատված նախադեպային իրավունք: Իրավաբանական կրթության ծրագրերում իրավունքի այս ճյուղը նույնպես նորույթ է, բացակայում է ուսումնական գրականություն, ձևավորման փուլում է ակադեմիական գրականությունը: Պրակտիկ իրավաբանները հիմնականում օգտվում են այլ պետությունների, միջազգային կառույցների մշակած գրականությունից: Կարևոր ուղեցույցներ են, ինչպես նշվեց, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները: Նշանակալի իրադարձություն էր 2025 թվականի ապրիլի 16-ի [Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1776 որոշումը](#), որով մեկնաբանվեցին օրենքի մի շարք դրույթներ, որոնց շուրջ հասարակական ու մասնագիտական շրջանակներում ընթանում էին ակտիվ բանավեճեր: Այդ իմաստով Սահմանադրական դատարանի որոշումը կարևոր ուղեցույց է իրավակիրառ պրակտիկա ձևավորելու համար:

Սույն ուղեցույցը մշակվել է հաշվի առնելով վերը նշված իրավիճակը, մասնավորապես, մասնագիտական գրականության պակասությունը: Ուղեցույցում ներկայացվել են քաղաքացիական բռնազանձման ինստիտուտի գոյություն ունեցող մոդելները, միջազգային կոնվենցիաները ու դրանցում քաղաքացիական բռնազանձման իրավունքի տարբեր սկզբունքների մեկնաբանությունները, այլ երկրների օրենքներն ու պրակտիկան: Միջազգային ու համեմատական իրավունքից հետո ներկայացված են Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին ՀՀ օրենքի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ, մեկնաբանություններ, ուղեցույցեր, որոնք անհրաժեշտ են պրակտիկ իրավաբաններին: Բոլոր վերլուծություններն արվել են միջազգային կոնվենցիաների ու դրանց նորմերի պաշտոնական մեկնաբանությունների, Եվրոպայի խորհրդի մարմինների խորհրդատվական փաստաթղթերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների, ՀՀ տարբեր օրենքների նորմերի համադրման և այլ իրավական աղբյուրների վերլուծության հիման վրա:

Հույսով ենք, որ ուղեցույցը կծառայի իր նպատակին, կլինի օգտակար իրավական ուղեցույց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման գործերում:

## 1. Գույքի բռնագրավման<sup>1</sup> ու բռնագանձման իրավական կառուցակարգերը

Գույքի բռնագրավման ու բռնագանձման իրավական նորմերն ամրագրված են քրեական, քաղաքացիական, վարչական իրավական կառուցակարգերում: Գոյություն ունեն նաև միջազգային իրավական մեխանիզմներ, որոնք կիրարկվում են միջազգային իրավական փոխօգնության ընթացակարգերի շրջանակներում՝ միջազգային կոնվենցիաների կամ երկկողմ միջպետական համաձայնագրերի հիման վրա: Ավանդաբար, գույքի բռնագրավման համակարգերը ստեղծվել ու զարգացել են քրեական իրավունքի շրջանակում: Սակայն, վերջին տասնամյակներում արագորեն զարգանում են նաև գույքի բռնագանձման քաղաքացիաիրավական համակարգերը: Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն երկու հիմնական իրավական կառուցակարգեր՝ մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավման և առանց մեղադրական դատավճռի գույքի (քաղաքացիական կամ վարչական) բռնագանձման ինստիտուտները:

### 1. Մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավումը

1. Մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավումը հանցագործության համար սահմանված պատժի տեսակ է: Մեղադրական դատավճռի առկայությունը գույքի բռնագրավման համար նախապայման է, հակառակ դեպքում բռնագրավումը խախտում է գույքի սեփականատիրոջ անմեղության կանխավարկածը և դրանից ածանցվող բազմաթիվ քրեադատավարական երաշխիքներ, այդ թվում՝ նաև մեղադրանքից պաշտպանվելու սահմանադրաիրավական երաշխիքները:<sup>2</sup> Նույնիսկ եթե չհաջողվի բռնագրավել դատապարտված անձի գույքը, դատապարտումով ու պատժի այլ տեսակ սահմանելով (ազատազրկում, տուգանք, հանրային աշխատանք, և այլն) քրեական հետապնդումը հասնում է իր կանխարգելիչ ու պատժիչ նպատակներին: Ուստի, **գույքի բռնագրավումը որպես հանցագործությունների կանխարգելման միջոց, երկրորդական նշանակություն ունի քրեական հետապնդման, դատապարտման**

<sup>1</sup> Միջազգային կոնվենցիաներում քրեական, քաղաքացիական, վարչական կամ կարգապահական վարույթների առումով օգտագործվում է «բռնագրավում» (անգլերեն՝ confiscation) հավաքական եզրույթը: Մեր տեքստում, ելնելով ներպետական իրավական համակարգում եզրույթների իրավական բովանդակությունից, «բռնագրավում» եզրույթը այսուհետ կօգտագործվի միայն քրեական վարույթի առնչությամբ, իսկ բռնագանձում եզրույթը կօգտագործվի քաղաքացիական բռնագանձման ինստիտուտի առնչությամբ:

<sup>2</sup> Դրանք սահմանված են ՀՀ սահմանադրության 67-րդ հոդվածի դրույթներում:

**շրջանակում:** Առաջնային նշանակություն ունեն հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ սահմանելը և տուժողին փոխհատուցելը: Վերջինս, որպես կանոն, կատարվում է գույքի բռնագանձման հաշվին: Եթե մեղադրական դատավճռի հիման վրա կատարվում է դատապարտված անձի գույքի բռնագանձում, դա առաջին հերթին պետք է ուղղվի տուժողի վնասների հատուցմանը, ոչ թե ապօրինի ծագում ունեցող գույքը տնտեսական շրջանառությունից հանելու հանրային շահի սպասարկմանը: Հակառակ դեպքում կխախտվի տուժողների սահմանադրաիրավական երաշխիքները<sup>3</sup>: Չնայած այդ ամենին, մեղադրական դատավճռի հիման վրա գույքի բռնագրավումը շարունակում է մնալ հանցագործություն կատարած անձանց հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներից և միջոցներից զրկելու ամենատարածված եղանակը: Դա ամենայն հավանականությամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական արդարադատությունը ավելի լայն իրավական պաշտպանության երաշխիքներ է ապահովում գույքի սեփականատերերի համար (երբ նրանք մեղադրյալի կարգավիճակում են), քան քաղաքացիական կամ վարչական արդարադատության համակարգերը:

*2. Քաղաքացիական բռնագանձման (in rem) ընթացակարգը՝  
հարուցված գույքի դեմ*

2. Առանց դատավճռի գույքի բռնագանձման ընթացակարգը, որը նաև կոչվում է քաղաքացիական բռնագանձման ընթացակարգ, առավել արդյունավետ է, եթե վարույթը իրականացվում է հանցավոր ճանապարհով ստացված գույքը տնտեսական կամ քաղաքացիաիրավական օրինական շրջանառությունից հեռացնելու առաջնային նպատակով, որպեսզի նման գույքը կամ եկամուտները չշարունակեն գեներացնել հանցավոր տնտեսական օգուտ: Նման վարույթը հարուցվում է ոչ թե անձի դեմ, այլ գույքի առնչությամբ (որտեղից էլ բխում է in rem արտահայտությունը, որը լատիներենից թարգմանաբար նշանակում է «առարկայի դեմ»): Քաղաքացիական բռնագանձման վարույթը գործում է կանխավարկածի հիման վրա, որ գույքն ունի անօրինական ծագում, մինչև պատասխանողը հակառակը չապացուցի: Կանխավարկածը, որը գործում է ապացուցման ցածր շեմով, որն, ընդհանուր առմամբ, հեշտորեն հաղթահարելի է, հակակշռվում է գույքի սեփականատիրոջ արդար դատաքննության երաշխիքներով և գույքային իրավունքների ու հանրային շահերի միջև արդարացի փոխհավասարակշռմամբ: Որքան ցածր ու հեշտ հաղթահարելի է կանխավարկածի ապացուցման շեմը, այնքան ավելի արդյունավետ

<sup>3</sup> Սահմանադրական դատարանի 2011թ հուլիսի 12-ի [ՍԴՈ-983](#) որոշումը:

դատավարական ու գույքային իրավունքների երաշխիքներ պետք է գործեն: Նաև, վարույթի իրական նպատակը ապօրինի ծագում ունեցող գույքը տնտեսական շրջանառությունից հանելն է, ոչ թե քաղաքացիական դատավարության շղարշի ներքո անձի նկատմամբ քողարկված քրեական հետապնդում իրականացնելը: Քանի որ որոշ դեպքերում քաղաքացիական բռնագանձման վարույթը կարող է ածանցվել քրեական գործից կամ կարող է իրականացվել քրեական գործի քննությանը զուգահեռ, ցանկալի է հնարավորինս խուսափել, որ քաղաքացիական վարույթը և քրեական գործի քննությունը փոխհատվեն **ժամանակագրությամբ, բովանդակությամբ և ընթացակարգերով**: Քրեական գործի քննությանը զուգահեռ կամ քրեական գործից ածանցվող քաղաքացիական բռնագանձման վարույթ իրականացնելիս անհրաժեշտ է բոլոր դեպքերում հիմնավորել, որ բռնագանձման ենթակա գույքն ունի հանցավոր ծագում, որն անհրաժեշտ է անել ոչ թե մեղադրական դատավճռի հիման վրա, այլ որոշակի փաստերի կամ ապացույցների շրջանակից բխեցված մտահանգումով: Այսինքն, պետք է ապացուցել ոչ թե գույքի հանցավոր ծագում ունենալու իրականությունը, այլ դրա հավանականությունը: Քաղաքացիական բռնագանձման վարույթը, բացի քրեական գործից ածանցվելուց, կարող է հարուցվել նաև քրեական վարույթից դուրս ստացված տվյալներից ու փաստերից բխեցված կանխավարկածից առ այն, որ պաշտոնատար անձի՝ պաշտոնավարման ընթացքում ձեռք բերած գույքը չի հիմնավորվել օրինական եկամուտներով: Սակայն, նույնիսկ այդ դեպքում անհրաժեշտ է ցույց տալ որոշակի կապ գույքի և գույքի սեփականատիրոջ (կամ տիրապետողի) հանցավոր արարքի միջև, քանի որ միջազգային իրավունքի համաձայն քաղաքացիական բռնագանձման վարույթի նպատակը **հանցավոր ծագում ունեցող գույքի** տնտեսական շրջանառության դեմ պայքարն է:

### 3. Քաղաքացիական ընդլայնված բռնագանձման (in rem) ընթացակարգ

3. Ընդլայնված բռնագանձման ընթացակարգը նույնպես քաղաքացիական բռնագանձման ինստիտուտ է, բայց տարբերությունը նրանում է, որ այս ընթացակարգի ներքո չի պահանջվում որոշակիորեն ցույց տալ բռնագանձման ենթակա գույքի կապը կոնկրետ հանցավոր արարքի հետ, այլ անհրաժեշտ է միայն ապացուցել, որ գույքի ծագումը չի հիմնավորում այն անձի օրինական եկամուտներով, որի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ տվյալ գույքի հետ կապ չունեցող հանցավոր արարքի համար: Վենետիկի հանձնաժողովը Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ՀՀ օրենքի վերաբերյալ իր [խորհրդատվական կարծիքում](#) նշել է, որ ՀՀ օրենքում

ներկայացված բռնագանձման կառուցակարգը ունի որոշ տարրեր ներմուծված ընդլայնված բռնագանձման ինստիտուտից, քանի որ 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի կարգավորումից կարելի է հասկանել, որ անհրաժեշտ չէ հիմնավորել կոնկրետ գույքի կոնկրետ հանցագործությամբ ստացված լինելը, այլ բավարար է միայն հիմնավորելը, որ գույքն ունի որոշակի առնչություն այն անձի հետ, ով դատապարտվել է հանցագործության համար: Նշված դրույթը սահմանում է, որ ուսումնասիրություն սկսելու հիմք է ուժի մեջ մտած մեղադրական դատական ակտը, որով հաստատվում է օրենքով նախատեսված հանցանքներից որևէ մեկի կատարումը, և տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր՝ կասկածելու, որ դատապարտված անձին կամ իր հետ փոխկապակցված անձին պատկանում է ապօրինի ծագում ունեցող գույք, որը չի բռնագանձվել դատավճռով: Այս դրույթում «տվյալ քրեական գործի նյութերով առկա են բավարար հիմքեր» արտահայտությունից կարելի է եզրահանգել, որ բռնագանձման ենթակա գույքի ապօրինի ծագումը հիմնավորվում է **ոչ թե դատապարտման արդյունքում պարզված, այլ քրեական գործի նյութերում տվյալ գույքի մասի տեղեկությունների առկայությամբ**, որոնք կարող են կապ չունենալ մեղադրանքի և դատապարտման հիմքերի հետ: Օրենքում նման կարգավորումը իրապես նման է ընդլայնված բռնագանձման ինստիտուտին:

## 2. Միջազգային իրավական փաստաթղթեր

4. Ապօրինի ծագում ունեցող գույքի՝ առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը ամրագրված է ստորև նշված հինգ միջազգային կոնվենցիաներում, որոնք սահմանում են կոռուպցիան բնույթի հանցագործությունների, փողերի լվացման, հանցավոր ծագում ունեցող գույքի արգելադրման, առգրավման ու բռնագանձման միջազգային իրավական հիմքերը, ինչպես նաև պետությունների միջև իրավական փոխօգնության հիմքեր և ընթացակարգեր: Քաղաքացիական բռնագանձման ինստիտուտը ներկայացված է բոլոր նշված փաստաթղթերում, սակայն մեծամասամբ այս ինստիտուտը ներկայացված է անուղղակիորեն՝ (implicit) կերպով, և միայն Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայում է ուղղակիորեն նշված այդ ինստիտուտի մասին: Միջազգային իրավունքում առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը հիմնականում շարունակում է մնալ որպես բացառիկ միջոց, իսկ ավանդական միջոցը համարվում է ապօրինի գույքի բռնագրավումը մեղադրական դատավճռի հիման վրա:
5. [«Թմրամիջոցների և հոգեմեղման նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի մասին»](#) 1988 թվականի ՄԱԿ-ի կոնվենցիայում (Վիեննայի կոնվենցիա) առաջին անգամ սահմանվեցին քաղաքացիական բռնագանձման

իրավական կառուցակարգի հիմքերը միջազգային իրավական փաստաթղթում: Կոնվենցիայի 5-րդ հոդվածը սահմանում է Մասնակից Պետությունների համար պարտավորություններ՝ այլ պետությունների կողմից իրավական օգնության մասին դիմում ստանալիս ապահովելու 5-րդ հոդվածում սահմանված թմրանյութերի, հոգեմետ նյութերի, դրանց պատրաստման սարքերի ու սարքավորումների հայտնաբերումը, արգելադրումը և առգրավումը՝ դրանք հետագայում բռնագրավելու նպատակով, ինչպես նաև ապացույցներ հավաքելու ուղղությամբ այլ միջոցներ, օրինակ, բանկային, ֆինանսական կամ առևտրային փաստաթղթեր հայտնաբերելու և առգրավելու վերաբերյալ: Կոնվենցիայով սահմանված են միջազգային փոխօգնության շրջանակում հայցվող պետության տարածքում գույքի արգելադրման, առգրավման և բռնագանձման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավոր չի լինի իրականացնել առանց քրեական հետապնդման մեխանիզմից դուրս իրավական կառուցակարգ ունենալու: Համարվում է, որ այս կոնվենցիայում առաջին անգամ, թեկուզ անուղղակիորեն, սահմանվեցին քաղաքացիական բռնագանձման կառուցակարգի իրավական հիմքեր: Հայաստանի Հանրապետությունում Վիեննայի կոնվենցիան ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 12-ին:

6. [«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին»](#) 1990 թվականի Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում (Ստրասբուրգի կոնվենցիա) նույնպես քաղաքացիական բռնագանձման ինստիտուտը սահմանված է անուղղակիորեն: Բռնագրավման վերաբերյալ 13-րդ հոդվածի բառապաշարը հիշեցնում է քաղաքացիական բռնագանձման (in rem) ընթացակարգերը, օրինակ՝ գույքի արժեքին համապատասխան բռնագանձում կատարելու մասին սահմանումը, իսկ 14-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը պարտավորեցում է հայցվոր կողմին ճանաչել ոչ միայն հայցող կողմի «մեղադրական դատավճիռը», այլև «դատարանի որոշումը», որը նշանակում է, որ կոնվենցիան չի պարտավորեցնում Մասնակից Պետություններին հանցավոր ծագում ունեցող գույքի արգելադրումը, առգրավումը և բռնագրավումը կատարել բացառապես քրեաիրավական մեխանիզմներով: Հայաստանի Հանրապետությունում Ստրասբուրգի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ին:

- 6.1. Կոնվենցիայի [բացատրական գեկույցում](#) նշվում է, որ քրեական վարույթից անկախ ցանկացած վարույթ կարող է համապատասխանել կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներին (բռնագրավելու

պարտավորությունը) այն դեպքում, եթե դրա շնորհիվ հնարավոր է բռնագանձել հանցավոր ծագում ունեցող գույք կամ եկամուտներ, եթե վարույթը իրականացվում է դատական մարմնի կողմից և եթե վարույթը առնչվում է հանցավոր ծագում ունեցող գույքին: Նման վարույթները, օրինակ, *in rem* վարույթները, կոնվենցիայում կոչվում են «բռնագանձման նպատակով վարույթներ» (կետ 43, պարբ. 4):

7. [Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի 2000թ. կոնվենցիայում](#) (Պալերմոյի կոնվենցիա) նշվում է, որ կոնվենցիայով սահմանված հանցագործություններից ստացված եկամուտների, գույքի, սարքավորումների կամ հանցագործության կատարման այլ միջոցների (սարքեր, սարքավորումներ) բռնագրավման մասին հայցող պետության դիմումը ստանալիս հայցվող պետությունը պետք է կիրառի արգելադրման, առգրավման ու բռնագրավման գործողություններ՝ որքանով հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում (13-րդ հոդվածի 1-ին մաս): [Կոնվենցիայի կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) 13-րդ հոդվածը մեկնաբանելիս նշվում է, որ Մասնակից պետությունները պետք է վերանայեն իրենց իրավական կառուցակարգը՝ ապահովելու համար, որ հայցող պետությանը իրավական օգնություն տրամադրելիս օգտագործվի բռնագրավման այլընտրանքային համակարգ (կետ 370): Ակնհայտորեն, այդ կետում նկատի է առնվում ոչ դատապարտման հիմքով գույքի բռնագանձման ինստիտուտը, հակառակ դեպքում անհնարին կլինի հայցող պետության իրավական փոխօգնության խնդրանքը կատարել քրեական հետապնդման շրջանակում: Հայաստանի Հանրապետությունում Պալերմոյի կոնվենցիան ուժի մեջ է մտել 2003 թվականի սեպտեմբերի 29-ին:
8. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#), ընդունված 2003 թվականին, սահմանում է, որ յուրաքանչյուր Մասնակից պետություն, առավելագույն չափով, որ հնարավոր է իր ներքին իրավական համակարգի շրջանակներում, պետք է ձեռնարկի ընթացակարգեր ու իրավական հիմքեր կոնվենցիայով սահմանված հանցագործություններից ստացված եկամուտների, գույքի, այդ հանցագործությունների կատարման համար օգտագործված սարքավորումների և այլ միջոցների բռնագրավման համար (հոդված 31): Հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում նշվում է, որ եթե հանցագործությունից ստացած եկամուտները ամբողջությամբ կամ մասնակիորեն վերաձվել կամ փոխակերպվել են այլ գույքի, բռնագրավման ենթակա է ամբողջ գույքը, իսկ եթե միացվել են օրինական ծագում ունեցող գույքին, բռնագրավման ենթակա է գույքի այն մասը, որը հանցավոր ծագում ունի և միացվել է օրինական գույքին:

Կոնվենցիայի 54-րդ հոդվածի 1-ին մասի գ-կետում սահմանված է, որ Մասնակից պետությունը օրենսդրության մեջ պետք է ամրագրի այնպիսի միջոցներ, որ հնարավորություն ստեղծվի հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավման համար՝ առանց նման գործերով քրեական վարույթի շրջանակներում դատավճիռ կայացնելու՝ երբ անհնարին է հանցագործություն կատարած անձին քրեորեն հետապնդել վերջինիս մահվան, թաքնվելու կամ բացակայելու կամ այլ համապատասխան դեպքերում: Բոլոր վերը նշված կոնվենցիաների մեջ սա միակ նորմն է, որում առանց մեղադրական դատավճռի բռնագանձման ինստիտուտը սահմանված է ուղղակիորեն: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2007 թվականի ապրիլի 7-ին:

8.1. Կոնվենցիայի դրույթները մեկնաբանված են երկու փաստաթղթերում՝ [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցում](#), ինչպես նաև [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի կիրառկման օրենսդրական ուղեցույցում](#): Այս փաստաթղթերը խորհրդատվական բնույթ ունեն, սակայն դրանցում ներկայացված մեկնաբանությունները հետևողականորեն կիրառվում են Մասնակից պետությունների կողմից՝ հակակոռուպցիոն քաղաքականություններ, ծրագրեր, օրենսդրական բարեփոխումներ մշակելիս, ինչպես նաև Մասնակից Պետությունների դատական պրակտիկայում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր որոշումներում վկայակոչում է այս փաստաթղթերը:

9. [«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների վճարման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին»](#) Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում, ընդունված 2005 թվականին (նաև Վարշավայի կոնվենցիա), կատարելագործվել են Ստրասբուրգի կոնվենցիայի նորմերը և մեխանիզմները: Հոդված 23-ի 5-րդ մասում սահմանված է, որ Մասնակից պետությունները պետք է հնարավորության դեպքում, իրենց երկրի օրենսդրության ներքո, առավելագույն չափով համագործակցեն այն Կողմերի հետ, որոնք պահանջում են կիրառել բռնագրավմանը համարժեք այնպիսի միջոցներ, որոնք քրեական պատժամիջոցներ չեն հանդիսանում: Այս կոնվենցիայում նույնպես սահմանված են հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի ու եկամուտների արգելադրման, առգրավման ու բռնագանձման ընթացակարգեր, որոնք հիշեցնում են քաղաքացիական բռնագանձման ընթացակարգը: Օրինակ, 5-րդ հոդվածում սահմանված են օրինական և

անօրինական գույքի միախառնվելու դեպքում գույքի բռնագանձման կարգավորումներ, որոնք հատուկ են քաղաքացիական բռնագանձման ինստիտուտին (տե՛ս նաև Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 4-6 մասերը): Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2008 թվականի հոկտեմբերի 1-ին:

9.1. Կոնվենցիայի [Բացատրական զեկույցում](#) նշվում է, որ Ստրասբուրգի կոնվենցիայի 13-րդ հոդվածի (վերևում) և սույն կոնվենցիայի 23-րդ հոդվածի 5-րդ մասի միջև տարբերությունը նրանում է, որ վերջինում հստակորեն շեշտված է այն միտքը, որ պետությունների միջև գույքի բռնագրավման նպատակով իրավական փոխօգնության շրջանակում առավելություն պետք է տրվի քաղաքացիական բռնագանձման ինստիտուտին (կետ 165-ում):

10. [Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների՝ հանցավոր եկամուտների օրինականացմանը \(լվացմանը\) և ահաբեկչության ֆինանսավորմանը դիմագրավելու մասին պայմանագիրը](#) սահմանում է իրավական հիմքեր և իրավական փոխօգնության մեխանիզմներ ԱՊՀ պետությունների միջև հանցավոր եղանակով ձեռք բերված գույքի՝ հանցավոր եկամուտների, ահաբեկչության ֆինանսավորման համար միջոցների կալանքի, բռնագրավման, օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման, տեղեկատվության փոխանակման և այլ համատեղ գործողությունների մասին: Այս կոնվենցիայում նույնպես որևէ վերապահում չի արվում, որ միջազգային իրավական փոխօգնության շրջանակում գույքի բռնագրավումը պետք է արվի բացառապես քրեաիրավական եղանակով: Հայաստանի Հանրապետությունում կոնվենցիան ուժի մեջ է մտել 2008 թվականի սեպտեմբերի 23-ին:

11. [Փողերի լվացման, ահաբեկչության, ֆինանսավորման և զանգվածային ոչնչացման գեների տարածման ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ստանդարտների](#) (ՖԱԹՖ հանձնարարականներ) 4-րդ հանձնարարականը վերաբերում է անօրինական ծագում ունեցող գույքի քաղաքացիական բռնագանձմանը: Հանձնարարականում նշվում է, որ երկրները պետք է դիտարկեն այնպիսի միջոցների սահմանման նպատակահարմարությունը, որոնք հնարավորություն են տալիս առանց մեղադրական դատավճռի բռնագանձել հանցավոր ճանապարհով ստացված գույքը կամ հանցագործության կատարման համար օգտագործված գործիքները (առանց մեղադրական դատավճռի բռնագանձում), կամ պահանջել, որ իրավախախտն

ապացուցի բռնագրավման ենթակա գույքի օրինական ծագումը, եթե դա չի հակասում ներպետական օրենսդրության հիմնարար սկզբունքներին:

12. **Եվրոպական միության՝ [Հանցավոր ծագում ունեցող եկամուտների և գործիքների արգելադրման ու բռնագրավման մասին 2014/42/EU Հրահանգում](#)** Եվրոպական միությունը Անդամ Պետություններին պարտավորեցրել է ապահովել իրավական ընթացակազեր հանցավոր ծագում ունեցող գույքը բռնագրավելու վերաբերյալ՝ դատապարտման կամ առանց դատապարտման հիման վրա՝ այդ թվում նաև մեղադրյալի բացակայությամբ դատաքննության եղանակով: Իսկ եթե բռնագրավումը հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի հիվանդության կամ փախուստի պատճառով, անհրաժեշտ է իրականացնել գույքի կամ եկամուտների բռնագրավում հարուցված քրեական գործի շրջանակում՝ այնպես, եթե կասկածյալը կամ մեղադրյալը ենթարկվեր քրեական պատասխանատվության դատաքննության տեղի ունենալու պարագայում:
13. **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը** մշակել է ծավալուն նախադեպային իրավունք առանց դատապարտման գույքի բռնագանձման ընթացակարգի վերաբերյալ: Դատարանի վճիռները և որոշումները վերաբերում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին (արդար դատաքննության իրավունք, ինչպես նաև «քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար բովանդակության վերաբերյալ), 6-րդ հոդվածի 2-րդ մասին (անմեղության կանխավարկած), 7-րդ հոդվածին (պատիժ բացառապես օրենքի հիման վրա) և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին (գույքից անարգել օգտվելու իրավունք): Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը շարունակ զարգանում է: Վերջին տարիների նախադեպային իրավունքում Եվրոպական դատարանը առավել մեծ ուշադրություն է դարձրել ապօրինի ծագում ունեցող գույքի և հանցավոր արարքի միջև կապի առկայությանը: Նաև, վերջին տարիների նախադեպային իրավունքում Եվրոպական դատարանը առավել խիստ պահանջներ է ներկայացնում գույքի ապօրինի ծագման կանխավարկածին ու ուսումնասիրության հետադարձ կիրառելիությանը հակակշռող դատավարական երաշխիքների առկայությանը՝ հանրային ու մասնավոր շահերը փոխհավասարակշռելիս:

### 3. Այլ երկրների քաղաքացիական բռնագանձման ընթացակարգերը

Այս բաժնում ներկայացված են մի շարք երկրների քաղաքացիական բռնագանձման օրենքների համառոտ նկարագրերը: Ընտրվել են տարբեր տարածաշրջանների

երկրներ, որոնք ներկայացնում են տարբեր իրավական (Ընդհանուր իրավունքի և Մայրցամաքային իրավունքի) համակարգեր, պատմականորեն ձևավորված տարբեր իրավական մշակույթներ: Այդուհանդերձ, միջազգային կոնվենցիաները, մասնավորապես, Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, Ստրասբուրգի, Պալերմոյի և Վարշավայի կոնվենցիաները այդ օրենքներին օժտել են ընդհանուր հատկանիշներով: Միևնույն ժամանակ, առկա են տարբերություններ և դա հիմնականում վերաբերում է նրան, թե ինչպես են տարբեր պետություններ փոխհավասարակշռել մասնավոր իրավունքները հանրային շահերի հետ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երկրում հանցավորության հատկանիշները, իրավական համակարգի ու իրավական մշակույթի առանձնահատկությունները, և այլ գործոններ:

## 1) Բուլղարիա

14. Բուլղարիայի [Պետության օգտին հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի](#) համաձայն՝ բռնագանձման ենթակա է միայն հանցագործության արդյունքում ստացված գույքը (հոդված 1), որի սեփականատերը կամ մեղադրյալ է, կամ նրա նկատմամբ կայացվել է մեղադրական դատավճիռ: Օրենքը սահմանում է նախորդող հանցագործությունների լայն շրջանակ (հոդվածներ 20 և 21), իսկ գույքի սեփականատերը պետք է լինի մեղադրյալ կամ նրա նկատմամբ պետք է կայացված լինի մեղադրական դատավճիռ միայն օրենքում սահմանված նախորդող հանցագործություններից որևէ մեկի հիման վրա: Օրենքը նաև հնարավորություն է տալիս հարուցել քաղաքացիական բռնագանձման վարույթ, երբ ուսումնասիրությամբ պարզվել է, որ տվյալ անձի գույքը չի հիմնավորվում օրինական եկամուտներով և գույքի սեփականատերը մեղադրյալ է օրենքում սահմանված նախորդող հանցագործություններից որևէ մեկով հարուցված քրեական գործում (հոդված 26, մաս 4): Թեև օրենքը սահմանում է գույքի ապօրինի ծագման կանխավարկածը (հոդված 37), օրենքը չի սահմանում կանխավարկածը ապացուցելու որոշակի, հստակ չափանիշներ: Օրենքի 40-րդ հոդվածում նշված «ողջամիտ ենթադրությունը» որպես ապացուցման չափանիշ չի բավարարել Վենետիկի հանձնաժողովին, որը նշել է, որ այդ չափանիշը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, ինչպես նաև չի համապատասխանում «հավանականությունների հավասարակշռում» (balance of probabilities) ապացուցման շեմին:<sup>4</sup>

## 2) Ավստրալիա

<sup>4</sup> «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի հունիսի 10-ի [CDL-AD\(2010\)0](#) երկրորդ (թիվ 563 / 2009) կարծիքը Հանցավոր եկամուտների բռնագանձման Բուլղարիայի օրենքի նախագծի վերաբերյալ: Կետ 32:

15. Ավստրալիայում քաղաքացիական բռնազանձման օրենքները ընդունված են և՛ դաշնային, և՛ նահանգային օրենսդրական ակտերում: Վարույթը կարող է հարուցվել կասկածի հիման վրա, որ անձը ունի «անբացատրելի հարստություն», ինչպես նաև, որ գույքը ունի հանցավոր ծագում և նրա սեփականատերը ներգրավված է եղել «լուրջ հանցավոր արարքի կատարման մեջ»: Վերջինը հիմնավորելու համար ապացույց չի պահանջվում: Քաղաքացիական դատարանը կարող է բռնազանձման մասին հայցը ընդունել վարույթ, եթե գտնում է, որ գույքի արժեքը 100,000 ավստրալիական դոլարից ավել է: Այնուհետև, դատարանը կարող է սահմանել ապացուցման բեռ գույքի անօրինական ծագումը հիմնավորելու համար: Եթե անձը չի հիմնավորում գույքի անօրինական ծագումը, իսկ դատարանը գտնում է, որ գույքն ունի հանցավոր ծագում և տվյալ անձը հավանականությունների հավասարակշռմամբ վերջին վեց տարում ներգրավված է եղել լուրջ հանցագործության մեջ, դատարանը բավարարում է դիմումը և պարտավորեցնում է տվյալ անձին վճարել չհիմնավորված գույքի արժեքը պետական գանձարան: Դատարանը կարող է մերժել դիմումը, եթե գտնում է, որ բռնազանձումը չի հետապնդում հանրային շահ: Բռնազանձման մասին որոշումը չի բեկանվում նույնիսկ այն դեպքում, երբ անձի դատապարտման մասին որոշումը բեկանվում ու վերացվում է այդ որոշումից առաջ կամ հետո: Դրանով օրենսդիրը մատնանշում է, որ քրեական և քաղաքացիական վարույթները փոխկապակցված չեն, դրանք մեկը մյուսով պայմանավորված չեն:

### 3) Անգլիա

16. Անգլիայում քաղաքացիական բռնազանձման վարույթը հարուցվում է, եթե օրինական եկամուտներով չհիմնավորված գույքի արժեքը նվազագույնը 10,000 ֆունտ է: Բռնազանձման ենթակա է կանխիկ գումար, անշարժ ու շարժական գույք, բանկային հաշվին գտնվող նվազագույնը 1,000 ֆունտ գումար: Նշված գույքի նկատմամբ կարող է կիրառվել նախնական ապահովման միջոց «ողջամիտ կասկածի» հիման վրա, որ գույքը ձեռք է բերվել հանցագործությամբ, սակայն չի պահանջվում հիմնավորել կոնկրետ հանցավոր արարքը: Դատարանը քաղաքացիական բռնազանձման դիմումը բավարարում է գույքի հանցավոր ծագման «հավանականությունների հավասարակշռման» ապացուցման չափանիշի հիման վրա: 2018 թվականին կառավարության հրապարակած ուղեցույցի հիման վրա՝ դատարանը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման դիմումը կարող է բավարարել, եթե հանցավոր արարքը կատարվել է Անգլիայից դուրս, կասկածյալը չի գտնվում Անգլիայում, քրեական հետապնդման համար բացակայում է բավարար ապացույց, կամ քրեական հետապնդումը չի

հանգեցրել անձի դատապարտմանը: Կանխիկ կամ բանկային հաշվի վրա գտնվող գումարը կարող է նաև բռնագանձվել վարչական կարգով, եթե դրա դեմ չի առարկում կողմը: Թեև օրենքը չի սահմանում հանրային շահի պահանջը, դատարանները հետևողականորեն հաշվի են առնում դա:

#### 4) Մոնտենեգրո

17. Քաղաքացիական բռնագանձումը կարգավորվում է [Հանցագործության արդյունքում ստացված և անօրինական ծագում ունեցող նյութական հասույթի առգրավման ու բռնագանձման մասին](#) օրենքով: Բռնագանձման վարույթը կարող է հարուցվել միայն հանցավոր ճանապարհով ստացված գույքի բռնագանձման նպատակով: Վարույթը կարող է հարուցվել երկու առանձին հիմքերով: Առաջին, վարույթը կարող է հարուցվել հիմնավոր կասկածի հիման վրա, որ գույքը ձեռք է բերվել հանցավոր եղանակով, և եթե գույքի սեփականատերը չի կարողացել հիմնավորել գույքի օրինական ծագումը և դատապարտվել է վերջնական մեղադրական դատավճռով օրենքում սահմանված նախորդող հանցագործություններից որևէ մեկի կատարման համար (հոդված 2): Երկրորդ, վարույթը կարող է հարուցվել, եթե անձը, ում նկատմամբ քրեական վարույթը հարուցվել է օրենքում սահմանված նախորդող հանցագործություններից որևէ մեկի կատարման հիմքով, մահացել է կամ քրեական վարույթը անհնարին է շարունակել նրա հիվանդության, փախուստի, համաներման, ներման, վաղեմության ժամկետի կամ այլ նման հանգամանքներով: Այդ հիմքով վարույթը կարող է հարուցվել, եթե բռնագանձման ենթակա գույքի արժեքը գերազանցում է 5,000 եվրոն: Օրենքը գործում է գույքի ապօրինի ծագման կանխավարկածի հիման վրա, քանի դեռ պատասխանողը հակառակը չի ապացուցել: Սակայն, օրենքը չի սահմանում կանխավարկածը հիմնավորելու համար ապացուցման չափանիշ: Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, համաձայն որի բռնագանձման մասին դիմումը դատարան ներկայացնելիս դատախազը պետք է հիմնավորի, որ գույքը չի համապատասխանում անձի օրինական եկամուտներին, Վենետիկի հանձնաժողովի կարծիքով չի տրամադրում բավարար երաշխիք այդ չափանիշի լայն ու կամայական մեկնաբանության դեմ:<sup>5</sup> Օրենքը սահմանում է բռնագանձումը բացառապես ապօրինի գույքի վրա տարածելու կարգավորումը այն դեպքում, երբ ապօրինի գույքը միացվել է օրինական գույքին՝ ըստ Կոռուպցիայի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորման:

<sup>5</sup> «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2024 թվականի մայիսի 22-ի [CDL-PI\(2024\)010](#) կարծիքը: Կետ 31:

## 5) Ռումինիա

18. Ռումինիայում ապօրինի գույքի բռնագանձման մասին օրենք գործել է դեռ 1968 թվականից, ու այն կիրառելի է եղել ողջ բնակչության նկատմամբ: 1996 թվականին օրենքի կիրառության շրջանակը սահմանափակվել է՝ ներառելով միայն հանրային պաշտոնատար անձանց որոշ խմբերի: 2007 թվականին ստեղծվել է Ազգային բարեվարքության գործակալությունը, որը գործում է մինչ այժմ, որն իրավասու է ուսումնասիրել պաշտոնատար անձանց հայտարագրերը, և եկամուտների և ծախսերի միջև «էական հակասություն» հայտնաբերելիս, իրավասու է հարուցել վարչական վարույթ՝ ստուգման նպատակով: Սա քաղաքացիական բռնագանձման վարույթի առաջին աստիճանն է: Գործակալությունը պարտավոր է ծանուցել պաշտոնատար անձին վարույթի հարուցման մասին և հնարավորություն տալ, որ վերջինս ներկայացնի գույքի ծագման օրինականության մասին ապացույցներ: Գործակալությունը իրավունք ունի կատարել հարցումներ պետական ու մասնավոր մարմիններին, ու հավաքել ապացույցներ: Վարույթի ավարտին Գործակալությունը ընդունում է որոշում վարույթը կարճելու մասին, կամ ընդունում է ստուգման արդյունքների մասին եզրակացություն առ այն, որ առկա է էական անհամապատասխանություն հաշվետու ժամանակաշրջանում տարեկան հայտարագրում ներկայացված եկամտի ու ծախսերի միջև: Այս որոշումից հետո սկսվում է քաղաքացիական բռնագանձման վարույթի երկրորդ փուլը, որն իրականացվում է Ունեցվածքի ստուգման հանձնաժողովի կողմից, որը վարչական գործերով վերաքննիչ դատարանին կից հետաքննության մարմին է, որը բաղկացած վերաքննիչ դատարանի երկու դատավորներից և մեկ դատախազից: Հանձնաժողովը իրականացնում է գործակալության կողմից մատնանշած գույք(եր)ի ծագման օրինականության հետաքննություն: Հանձնաժողովն իրավունք ունի կատարել հարցումներ, հրավիրել վկաներ, հանձնարարել փորձաքննություն: Վարույթն իրականացվում է մրցակցային դատավարության կարգով, պաշտոնատար անձն իրավունք ունի ունենալ փաստաբան: Եթե Հանձնաժողովը գտնում է, որ խնդրո առարկա գույք(եր)ի ծագման օրինականությունը չի հաստատվել, ներկայացնում է հայց վերաքննիչ դատարան գույքը բռնագանձելու պահանջով: Վարույթն իրականացվում է վարչական դատավարության կարգով՝ մրցակցային դատավարության սկզբունքով: Պատասխանողն իրավունքի ունի բողոքարկել վարչական դատարանի որոշումը վճռաբեկ դատարան, որի որոշումը վերջնական է, ենթակա չէ բողոքարկման:

## 6) Միացյալ Նահանգներ

19. Միացյալ Նահանգներում քաղաքացիական բռնագանձման վարույթը հարուցվում է գույքի դեմ (այդտեղից էլ ծագում է այդ վարույթի *in rem* անվանումը, որը լատիներենով նշանակում է առարկայի դեմ): Վարույթը հարուցելուց հետո դատախազական մարմինը ուղարկում է ծանուցումներ անձանց, ովքեր հավանական կապ ունեն գույքի հետ որպես սեփականատերեր: Եթե որևէ անձ ցանկանում է ներգրավվել որպես պատասխանող, այդ մասին տեղեկացնում է վարույթ իրականացնող մարմնին, ու վերջինս կայացնում է համապատասխան դատավարական որոշում: Եթե ոչ մի անձ չի արձագանքում ծանուցումներին, քննությունը շարունակվում է գույքի դեմ: Դատախազական մարմինը (դաշնային կամ նահանգային) հայցը ներկայացնում է դատարան «ապացույցների գերակայության» (preponderance of evidence) չափանիշի հիման վրա, որը նշանակում է, որ խնդրո առարկա հարցը պետք է ապացուցվի «ավելի հավանական է՝ այո, քան՝ ոչ» ապացուցման շեմով (ըստ էության՝ 50+1 տոկոս հավանականություն), իսկ պատասխանողը կարող է հերքել դատախազի պնդումը «անմեղ սեփականատեր» ապացուցման չափանիշի հիման վրա, ըստ որի պետք է հիմնավորել, որ սեփականատերը տեղյակ չի եղել գույքի ապօրինի ծագման մասին, իսկ նույնիսկ եթե տեղյակ է եղել, հավանություն չի տվել որևէ օրինական գործողության ու ինքն էլ չի մասնակցել որևէ անօրինական գործողության, որի արդյունքում ձեռք է բերվել գույքը: Պատասխանողը նույնպես ապացուցման բեռը սպասարկում է «ավելի հավանական է՝ այո, քան՝ ոչ» չափանիշի հիման վրա: Վարույթ կարող է հարուցվել ցանկացած արժեք ունեցող գույքի առնչությամբ, թեև որոշ նահանգներ սահմանում են նվազագույն շեմ, օրինակ՝ 1,000 դոլար: Մինչև 500,000 դոլար արժեք ունեցող գույքի դեպքում կարող է հարուցվել գույքի բռնագանձման վարչական վարույթ, որի դեպքում դատական վարույթը միակողմանի է, քանի դեռ սեփականատերը անհայտ է: Սեփականատիրոջ ի հայտ գալու դեպքում, ով պնդում է, որ գույքը պատկանում է իրեն և ստանձնում է գույքի պաշտպանությունը բռնագանձումից, դատական վարույթը վերածվում է անձի դեմ ուղղված քաղաքացիական հայցային վարույթի:

## 7) Իտալիա

20. Իտալիայում գործում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մի քանի իրավական ընթացակարգեր: Առաջինը քրեական օրենսգրքով սահմանված «ընդլայնված բռնագանձման» ինստիտուտն է, որի համաձայն բռնագանձվում է կազմակերպված հանցավորության, մաքսանենգության, թմրանյութերի շրջանառության, կաշառակերության և այլ ծանր հանցագործությունների համար դատապարտված անձի գույքը, որը կապ չունի

դատապարտման հիմքերի հետ, բայց որի որի ծագումը չի հիմնավորվել օրինական եկամուտներով, իսկ դատապարտված անձն էլ չի հիմնավորել դրա օրինական ծագումը: Վերը նշվածն այնպիսի հանցագործություններն են, որոնք սովորաբար վերագրվում են մաֆիայի անդամներին: Հենց այդ նպատակով է քրեական օրենսգրքում սահմանվել ընդլայնված բռնազանձման ընթացակարգը, որը համարվում էր պատժի սահմանված վարույթի մաս, թեև բովանդակությամբ առանձնանում է դատապարտման հիմքերից: Դատաքննության ընթացքում դատախազը կարող է միջնորդել դատարանին մեղադրյալի դատապարտման դեպքում կիրառել ընդլայնված բռնազանձման ընթացակարգը, որը դատարանը, մեղադրյալի դատապարտման դեպքում, կարող է կիրառել իր հայեցողությամբ: Երկրորդ ընթացակարգը Քրեական օրենսգրքում սահմանված կանխավարկածն է, ըստ որի առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտված անձի տվյալ գույքը համարվում է հանցավոր ծագումով ձեռք բերված, եթե դրա արժեքը անհամաչափ է անձի հայտարարագրած եկամուտներին: Ընդ որում, օրենքով չի պահանջվում, որ հիմնավորվի գույքի կապը դատապարտման հիմքում ընկած մեղադրանքների հետ: Եթե մեղադրյալը չի կարողանում հիմնավորել գույքի օրինական ծագումը, դրանք բռնազանձվում են դատապարտման հետ: Երրորդ ընթացակարգը սահմանված է Մաֆիա դեմ իտալիայի օրենքում և կոչվում է «կանխարգելիչ բռնազանձում», որը նման է քաղաքացիական բռնազանձման վերը նշված օրենքներին, որի համաձայն դատարանը կարող է գույքի բռնազանձման մասին որոշում կայացնել ցանկացած անձի դեմ, ում դեմ հարուցվել է բռնազանձման վարույթ, ով չի կարողացել հիմնավորել գույքի ծագումը օրինական եկամուտներով:

## 8) Ֆիլիպիններ

21. Ֆիլիպիններում քաղաքացիական բռնազանձման համակարգը կարգավորվում է Փողերի լվացման դեմ ակտով (2001) և Քաղաքացիական բռնազանձման կանոնագրքով, ըստ որի իրավասու մարմինը կարող է դիմել դատարան անօրինական գործունեության հետ կապ ունեցող գույքի բռնազանձման համար: Առանձին օրենքով կարգավորվում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման վարույթը: Քաղաքացիական բռնազանձման (in rem) վարույթը հարուցվում է գույքի դեմ, որի համար անհրաժեշտ չէ քրեական վարույթի առկայություն: Այդուհանդերձ, վարույթը կարող է հարուցվել նաև այն հիմքով, որ գույքը ստացվել է փողերի լվացման եղանակով: Վարույթը հարուցվում է *«կան հիմքեր կարծելու համար, որ առկա են հավանական հիմքեր»* ապացուցման չափանիշի հիման վրա, իսկ գույքի ապօրինի ծագման ապացուցման չափանիշը դատարանի համար «ապացույցների

գերակայության» չափանիշն է (այլ կերպ՝ «գույքի ապօրինի ծագումը ավելի հավանական է, քան՝ ոչ» ապացուցման չափանիշը), որի հիմքով պետք է ցույց տալ, որ գույքն առավել հավանական է, որ ունի ապօրինի ծագում կամ ստացվել է փողերի լվացումով: Դատարանի կողմից գույքի բռնագանձման մասին որոշման կայացումից հետո ցանկացած անձ կարող է դիմել դատարանին ու ստանձնել գույքի պաշտպանությունը բռնագանձումից՝ ապացուցելով, որ գույքն ունի օրինական ծագում: Այդ դեպքում դատարանը վերսկսում է վարույթը ընդհանուր կարգով՝ մինչև գույքի մասին վերջնական որոշման կայացումը:

#### 4. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքը

##### 1) Օրենքի նպատակը և բնույթը

22. [«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին»](#) օրենքը (այսուհետ նաև Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2020 թվականի ապրիլի 16-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի մայիսի 23-ին: Օրենքում ամրագրվել է քաղաքացիական բռնագանձման (in rem) իրավական կառուցակարգը: Օրենքը հետապնդում է երկու նպատակ՝ հանցավորության դեմ պայքարը և կոռուպցիայի կանխարգելումը: Որպես նախապայման՝ առաջին նպատակով հարուցված վարույթի շրջանակում անհրաժեշտ է ցույց տալ բռնագանձվող գույքի և հանցավոր արարքի միջև կապը, իսկ երկրորդ նպատակով հարուցված վարույթի շրջանակում պետք է հիմնավորել, որ պաշտոնատար անձը գույքը ձեռք է բերել հանրային պաշտոնը ստանձնելուց հետո: Հայցվորը (դատախազը) ունի ուսումնասիրության ընթացքում ապացույցներ հավաքելու լայն հնարավորություններ՝ հանրային մարմիններից, իրավաբանական ու ֆիզիկական անձանցից տեղեկություններ պահանջելու ու ստանալու, դատարանի որոշման հիման վրա նոտարական, բանկային, ապահովագրական կամ առևտրային գաղտնիք ստանալու, դատարանի որոշման հիման վրա անձի նկատմամբ առավել միջամտող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու իրավունքներ: Օրենքը գործում է հայտնաբերված գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հիման՝ մինչև պատասխանողը հակառակը չի ապացուցում: Ապացուցման կանոնները սահմանված են Քաղաքացիական դատավարության կանոններով: Դատարանի որոշմամբ պատասխանողի գույքի նկատմամբ կարող են կիրառվել արգելանքներ՝ նախնական ապահովման միջոց մինչդատական փուլում և հայցի ապահովման միջոց դատական փուլում, որոնք իրականացվում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդհանուր

կանոններով: Սահմանադրական դատարանը 2025թ. ապրիլի 16-ի [ՍԴՈ-1776](#) որոշմամբ որոշել է, որ Օրենքը համապատասխանում ՀՀ սահմանադրությանը:

2) Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1776 որոշումը

23. [ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1776 որոշմամբ](#) քննության է առել Օրենքի սահմանադրականության հարցը Ազգային ժողովի պատգամավորների դիմումի հիման վրա՝ վերացական ստուգման ընթացակարգի շրջանակում: Դատարանը որոշել է, որ Օրենքն իր ամբողջության մեջ սահմանադրական է: Մասնավորապես, դատարանը որոշել է, որ առանց դատավճռի գույքի բռնագանձման իրավական կառուցակարգը չի հակասում Սահմանադրությանը, բխում է միջազգային իրավունքից, Օրենքի երկու նպատակները՝ հանցավորության դեմ պայքարը և կոռուպցիայի դեմ պայքարը հետապնդում են Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանրային շահը, իսկ սահմանված ընթացակարգերը համաչափ են այդ իրավաչափ նպատակներին:

24. Դատարանը մեկնաբանել է, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բռնագանձման ենթակա է այն գույքը, որը կապ ունի հանցանքի հետ (անկախ քրեական գործի առկայությունից), իսկ 5-րդ և 6-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բռնագանձման ենթակա է այն գույքը, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի՝ պաշտոնն ստանձնելու պահից հետո:

25. Իրավական որոշակիության առումով Սահմանադրական դատարանը գտել է, որ թեպետ խնդրահարույց է Օրենքի գործողության ոլորտը հետադարձ ուղղությամբ մինչև 1991 թվականը կիրառելը, հատկապես ժամանակի հոսքին զուգահեռ, սակայն վերացական ստուգման շրջանակում հնարավոր չէ քննարկել դրա սահմանադրականության հարցը: Մինևույն ժամանակ եզրահանգել է, որ օրենսդիրը պետք է անհապաղ մշակի Օրենքում ընթացակարգերի կիրառման վաղեմության մասին կարգավորումներ՝ խուսափելու համար իրավական անորոշությունից:

26. Արդար դատաքննության իրավունքի մասով Սահմանադրական դատարանը որոշել է, որ ուսումնասիրության (մինչդատական) փուլում պատասխանողի իրավունքների սահմանափակ շրջանակը հակակշռվում է դատաքննության փուլում արդար դատաքննության երաշխիքներով, օրինակ՝ մրցակցային դատավարության կանոններով, իսկ դատախազը թեև ունի իշխանական

լիազորություններ, դատավարության ընթացքում չունի որևէ դատավարական առավելություն պատասխանողի նկատմամբ, քանի որ դատավարությունը ընթանում է քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգով:

3) Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքը

27. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2022 թվականի դեկտեմբերի 19-ին հրապարակել է [CDL-AD\(2022\)048 խորհրդատվական կարծիքը](#) Օրենքի վերաբերյալ՝ Սահմանադրական դատարանի [աշխատակարգային որոշման](#) հիման վրա: Ի պատասխան Սահմանադրական դատարանի բարձրացրած կոնկրետ հարցերի, Հանձնաժողովը նշել է, գույքի ապօրինի լինելու կանխավարկածը տալիս է մարդու իրավունքների միջամտության լայն հնարավորություն, սակայն այդ միջամտությունը անհամաչափ չէ, քանի որ կանխավարկածը հակակշռվում է դատական պաշտպանության երաշխիքներով: Այդուհանդերձ, Օրենքը չի սահմանում կանխավարկածի ապացուցման հստակ չափանիշներ: Թեև Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է ապացուցման այնպիսի չափանիշներ, ինչպիսին են «ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը»՝ «հիմնված ներքին համոզման վրա», ցանկալի է, որ Օրենքում ավելացվի ապացուցման առավել ճշգրիտ «հավանականությունների հավասարակշռություն» չափանիշը:

## 5. Բռնագանձման առարկան. գույք և եկամուտներ

28. **Բռնագանձման առարկան ապօրինի ծագում ունեցող գույքն է**, որում գույքը որպես եզրույթ մեկնաբանվում է ըստ Քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածի նույնանուն հասկացության, որը ներառում է *դրամական միջոցները, կրիպտոակտիվները, արժեթղթեր և գույքային իրավունքները*:

28.1. *Դրամական միջոցներ.* սահմանումը ներկայացված է Քաղաքացիական օրենսգրքի 142-րդ հոդվածի 2-րդ մասում, ըստ որի դրամական միջոցը Հայաստանի Հանրապետության տարածքում դրամ անվանական արժեքով պարտադիր ընդունման համար օրինական վճարամիջոց է:

28.2. *Կրիպտոակտիվը.* ըստ Քաղաքացիական օրենսգրքի 143.1 հոդվածի՝ ծածկագրման (կրիպտոգրաֆիայի) վրա հիմնված գույք է, որն ունի արժեք կամ հավաստում է իրավունք, և որը կարող է փոխանցվել և պահպանվել բացառապես էլեկտրոնային

եղանակով՝ ապակենտրոնացված գրանցամատյանի տեխնոլոգիայի կամ նմանատիպ այլ տեխնոլոգիայի միջոցով: 2025 թվականի մայիսի 29-ին ընդունվել է [Կրիպտոակտիվների մասին օրենքը](#), որը կարգավորում է ՀՀ-ում կրիպտոակտիվների շուկայում գործունեության իրականացման հետ կապված հարաբերությունները:

28.3. *Արժեթղթեր*. սահմանումը տրված է «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի արժեթղթեր են համարվում բաժնետոմսերը, բաժնետոմսերով ամրագրված իրավունքներին համարժեք իրավունքներ տվող այլ արժեթղթերը, պարտատոմսերը և պարտքային այլ արժեթղթերը, ներդրումային ֆոնդերի փայերը, բաժնետոմսերը և այլ բաժնային արժեթղթերը, շահույթի բաշխման համաձայնությունը, նման համաձայնությանը մասնակցությունը վկայող փաստաթուղթը, դրամական շուկայի գործիքները, կապիտալի (միջոցների) ներգրավման նպատակով օգտագործվող ցանկացած ներդրումային համաձայնությունը: բաժնետիրական ընկերության շահաբաժին ստանալու իրավունք:

28.4. *Գույքային իրավունքներ*. մեկնաբանվում է Քաղաքացիական օրենսգրքում այդ արտահայտության իրավական բովանդակությամբ: Քաղաքացիական օրենսգրքի Չորրորդ բաժնում սահմանված են ընդհանուր սեփականության (Գլուխ 12), հողի նկատմամբ սեփականության և գույքային իրավունքների (Գլուխ 13), բնակելի տարածության սեփականության և այլ գույքային իրավունքների (Գլուխ 14), գրավի, հիփոթեքի (Գլուխ 15) վերաբերյալ մանրամասն կարգավորումներ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի ներքո գույքային իրավունքը մեկնաբանվում է հետևյալ բովանդակությամբ՝

*«Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի առաջին մասով նախատեսված «գույք» հասկացությունն ինքնուրույն նշանակություն ունի, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներ ու շահեր նույնպես կարող են համարվել «գույքային*

*իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» սույն դրույթի իմաստով» (Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի, թիվ [27651/05](#), 23/06/2009թ., կետ 55):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գույքային իրավունք է ճանաչել հետևյալը.

- հողատարածքը, տունը և բնակարանը,
- շարժական գույքը, օրինակ, անձնական իրեր, ընտանեկան կենդանիները,
- ընկերության բաժնեմասերը,
- մտավոր սեփականությունը,
- կազմակերպության բարի համբավը,
- դատական ակտով բավարարված հայցապահանջը,
- սոցիալական ապահովության իրավունքը, աշխատավարձը, թոշակը,
- ձկնաորսության, տաքսի վարելու, այլկոհոլային խմիչքներ վաճառելու թույլտվությունը կամ լիցենզիան, փաստաբանի լիցենզիա՝ եթե այդ թույլտվությունները և լիցենզիաները արդեն օգտագործվել են և սեփականատերերին բերել են հասույթներ՝ մինչև լիցենզիայից կամ թույլտվությունից զրկելը;
- գույքային իրավունք ունենալու լեգիտիմ ակնկալիքը:

29. **Գույքն ունի ապօրինի ծագում**, եթե դրա ձեռք բերումը, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, այդ թվում նաև դրա օգտագործումից ստացված պտուղները, արտադրանքը, եկամուտները, չեն հիմնավորվում **օրինական եկամուտներով**: Օրենքը չի հստակեցնում, թե օրինական եկամուտներով չհիմնավորված գույքը արդյոք միաժամանակ պետք է նաև ունենա հանցավոր ծագում, թե՛ օրինական եկամուտներով չհիմնավորվելը կարող է լինել նաև այլ տեսակի իրավախախտման, օրինակ, զանցանքի կամ քաղաքացիական պատասխանատվության հանգեցնող որևէ արարքի հետևանք:

- 29.1. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#) սահմանում է, որ քաղաքացիական բռնազանձման վարույթի նպատակն է հանցագործություններից ստացված գույքի/եկամուտների բռնազանձումը (հոդված 31): Նույն մոտեցումն է սահմանված նաև [Վիեննայի կոնվենցիայում](#) (հոդված 5), [Ստրասբուրգի կոնվենցիայում](#) (հոդված 1, դ-կետ) [Պալերմոյի կոնվենցիայում](#) (հոդված 12), և [Վարշավայի կոնվենցիայում](#) (հոդված 1, դ-կետ):
- 29.2. Վենետիկի հանձնաժողովը իր [խորհրդատվական կարծիքում](#) այդ հարցին անդրադարձել է աղոտ կերպով, նշելով, որ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում օպերատիվ-հետախուզական միջոցառումներին հղում անելը պետք է որ նշանակի կասկածի առկայություն՝ չմասնավորեցնելով, թե նկատի ունի հանցավոր արարքի վերաբերյալ կասկածը, թե՛ գույքի օրինական եկամուտներով չհիմնավորված լինելու մասին կասկածը (կետ 38-ում):
- 29.3. Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1776 որոշումում մեկնաբանել է, որ 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 կետերը պետք է մեկնաբանվեն այնպես, որ բռնազանձման ենթակա է այն գույքը, որը կապ ունի հանցանքի հետ, իսկ նույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը՝ այնպես, որ բռնազանձման ենթակա է գույքը, որը ձեռք է բերվել պաշտոնատար անձի կողմից պաշտոնը ստանձնելուց հետո, և ունի ապօրինի ծագում: Այս երկրորդ դեպքում Սահմանադրական դատարանը նույնպես չի հստակեցրել, թե արդյոք ապօրինի ծագումը պետք է մեկնաբանվի բացառապես հանցագործության, թե՛ վարչական իրավախախտման կամ քաղաքացիական իրավունքի խախտման արդյունքում ստացված գույքը:
- 29.4. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արձանագրել է գույքային իրավունքի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի) խախտում այնպիսի պարագայում, երբ քաղաքացիական բռնազանձման օրենքը հստակորեն, բավարար կանխատեսելիությամբ, չի սահմանել, թե ինչ է նշանակում «անօրինական եկամուտ» կամ «աշխատանքի հետ կապ չունեցող եկամուտ», և թե արդյոք այդպիսի եկամուտը պետք է ստացված լիներ հանցավոր գործունեության, թե այլ տեսակի իրավախախտման արդյունքում

([Դիմիտրովին ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 12655/09, ՄԵԵԴ, 03/03/2015, կետ 47):

30. **Օրինական եկամուտ է**, ըստ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, դրամով, արտարժույթով, կրիպտոակտիվով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված եկամուտները, առանց հարկերի և պարտադիր վճարների, որոնք ստացվել են Քաղաքացիական օրենսգրքի 1277-րդ հոդվածի համաձայն որոշված կիրառելի իրավունքի նորմերի պահպանմամբ: Օրենքի այդ դրույթը այնուհետև տրամադրում է քաղաքացիական շրջանառության տեսակների սպառիչ ցանկ, որոնց իրավական բնութագրերը սահմանված են Քաղաքացիական օրենսգրքում:

30.1. Որոշ դեպքերում հանցավոր ճանապարհով ստացված եկամուտը կարող է խառնվել (միացվել) օրինական եկամտի հետ, որն էլ հետագայում կարող է վերածվել կամ փոխակերպվել այլ գույքի կամ եկամուտների և հետագայում դրանցից ստացվեն նոր եկամուտներ: Նման դեպքերի համար [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան](#) (հոդված 31, մաս 4-6) և [Վարչավայի կոնվենցիան](#) (հոդված 5, կետեր գ-դ) սահմանում են, որ նախնական կամ հայցի ապահովման միջոցներ կամ բռնագանձում իրականացնելիս անհրաժեշտ է տարանջատել օրինական գույքը անօրինական գույքից և ապահովման միջոցները կամ բռնագանձումը տարածել միայն անօրինական գույքի վրա, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բռնագանձման ենթակա գույքի գնահատված արժեքի վրա: Այդ կերպ կապահովվի գույքային իրավունքի միջամտության համաչափությունը, որին մեծ ուշադրություն է դարձնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի հիմքով գանգատներ քննելիս:

31. **Անձին պատկանող գույք է**, ըստ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, այդ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը, այդ թվում՝ ընդհանուր բաժնային սեփականությունում՝ տվյալ անձին պատկանող բաժինը, իսկ ընդհանուր համատեղ սեփականությունում՝ գույքն ամբողջությամբ:

Անձին պատկանող գույք է նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի, սակայն դրա իրական շահառուն տվյալ անձն է:

Անձին պատկանող գույք է նաև այլ անձին սեփականության իրավունքով պատկանող գույքը, որը տվյալ անձը ուսումնասիրվող

ժամանակահատվածում անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է այդ անձին:

Վերջինը պետք է կարդալ Օրենքի 23-րդ հոդվածի լույսի ներքո, որում սահմանված են բարեխիղճ երրորդ անձի վերաբերյալ կարգավորումները: [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 31-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ արգելադրման, առգրավման ու բռնագրավման ընթացակարգերը չպետք է վնասեն բարեխիղճ երրորդ անձանց (բարեխիղճ ձեռք բերողների) իրավունքները: Կոնվենցիայի [կիրարկման օրենսդրական ուղեցույցում](#) այդ դրույթը մեկնաբանվում է այնպես, որ առնվազն պետք է բացառվի նման միջոցների կիրառումը երրորդ անձանց նկատմամբ, ովքեր տեղյակ չեն, որ գույքն ունի ապօրինի ծագում, կամ որևէ կապ չեն ունեցել իրավախախտների հետ (կետ 423):

Օրենքում վերը նշված մեկնաբանությունը տեղ է գտել 23-րդ հոդվածի 2-րդ կետում, ըստ որի անձը չի հանդիսանում բարեխիղճ ձեռք բերող, եթե իրավասու մարմինն ապացուցում է, որ այդ անձը գույքը ձեռք բերելու պահին գիտեր կամ ողջամտորեն կարող էր իմանալ գույքի՝ ապօրինի ծագում ունենալու մասին: Այս պայմանը բառացիորեն արտահայտված չէ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի գ-ենթակետում, որում միայն սահմանված է տվյալ անձի կողմից երրորդ անձին գույքը փոխանցելու օբյեկտիվ հատկանիշը, իսկ արարքի սուբյեկտիվ հատկանիշը (փոխանցելու նպատակը) այդ դրույթում սահմանված չէ: Հետևաբար, Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանումը կարող է լրացնել 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի գ-ենթակետը՝ բացահայտելու համար, թե երրորդ անձի փոխանցված գույքը արդյոք համարվում է անձին պատկանող գույք:

## 6. Իրավախախտման սուբյեկտները

32. **Իրավախախտման սուբյեկտը պաշտոնատար անձն է՝** ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի: Պաշտոնատար անձի շրջանակը Օրենքում ավելի նեղ է, քան Քրեական օրենսգրքում (տե՛ս 3-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում): Հանրային ծառայության մասին օրենքի համաձայն՝ պաշտոնատար անձ է հանրային պաշտոն զբաղեցնող անձը և հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձը: 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում այս երկրորդ խումբը չի սահմանվել պաշտոնատար անձի շրջանակում: Դա նշանակում է, որ Օրենքը չի տարածվում, օրինակ, քաղաքացիական ծառայողների նկատմամբ, որոնք զբաղեցնում են քաղաքացիական ծառայության պաշտոն: Բացի այդ, սահմանման մեջ նշվում

է նաև «հանրային պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցնող անձ» հասկացությունը, որը բառացիորեն սահմանված չէ Հանրային ծառայության մասին օրենքում: Անալոգիայի կիրառմամբ այդ հասկացության տակ կարելի է հասկանալ Քրեական օրենսգրքում «պաշտոնատար անձ» հասկացության ներքո սահմանված երրորդ խմբին պատկանող անձինք՝ պետական, պետական կառավարման համակարգի, տեղական ինքնակառավարման մարմնի, պետության կամ համայնքի կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության կամ հիմնարկի անունից հանդես գալու լիազորություն ունեցող կամ դրանց անունից իրավունք, պարտականություն կամ պատասխանատվություն առաջացնող գործառույթներ իրականացնող անձինք: Բոլոր դեպքերում, «հանրային պաշտոնին համարժեք պաշտոն զբաղեցնող անձ» հասկացությունը կարիք ունի լրացուցիչ պարզաբանման:

33. **Իրական շահառուն նույնպես իրավախախտման սուբյեկտ է:** Ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից, օգտին կամ որի հաշվին իրականացվել է գործարքը (գործողությունը), կամ ֆիզիկական անձ է, որը վերահսկում է կամ վերահսկել է գործարքը (գործողությունը) այն անձին, որի անունից կամ օգտին իրականացվել է գործարքը (գործողությունը):

33.1. Եթե նախորդող հանցագործությունը կապ ունի փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ և գույքը իրավաբանական անձի կամ կազմակերպության ակտիվ է, անալոգիայի հիմքով կարելի է օգտագործել [Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքի](#) 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի սահմանումը, որում ներկայացված է իրավաբանական անձի իրական շահառուի առավել մանրամասն ու գործնական սահմանում:

34. **Իրավախախտման սուբյեկտ է նաև փոխկապակցված անձը,** որը, ըստ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ է, մերձավոր ազգական կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որի հետ տվյալ անձը վարում է ընդհանուր տնտեսություն կամ համատեղ ձեռնարկատիրական գործունեություն, կամ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որին տվյալ անձն անհատույց կամ փաստացի անհատույց կամ շուկայականից էականորեն ցածր գնով փոխանցել է գույք:

34.1. Այս ձևակերպման մեջ «անձի հետ փոխկապակցված իրավաբանական անձ», «մերձավոր ազգական», «շուկայականից էականորեն ցածր գին» հասկացությունները

առանձին ներկայացված են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8, 9 և 14-րդ ենթակետերում՝ համապատասխանաբար:

«Ձեռնարկատիրական գործունեությունը» սահմանված է Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածում:

Գույքի «անհատույց փոխանցումը» քաղաքացիաիրավական շրջանառության եղանակ է, որը Քաղաքացիական օրենսգրքում սահմանված է նվիրատվության ներքո (Գլուխ 34):

«Համատեղ տնտեսություն վարելը» առավելապես գնահատողական հասկացություն է, քան իրավական կատեգորիա: Թեև դա առնչվում է ամուսնաընտանեկան հարաբերություններին և ընկալվում է հիմնականում որպես ընտանեկան պարտավորություն, այդ հարաբերություններից նաև ծագում են իրավահարաբերություններ, ինչպիսին են, օրինակ, գույքի համատեղ տնօրինումը, օգտագործումը, պարտականությունների բաշխումը, և այլն: Հայտարարագիր ներկայացնող սուբյեկտներ են նաև համատեղ բնակվող անձինք:

35. **Շահագրգիռ անձը**, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն, անձն է, ում իրավունքների և պարտականությունների վրա **առերևույթ կարող է ազդել գույքի բռնագանձումը**: Օրենքը չի սահմանում նման անձանց ցանկ: Օրենքի համատեքստից բխում է, որ շահագրգիռ անձինք են, նախ և առաջ, սեփականատերերը և գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքներ ու շահեր ունեցող անձինք՝ ըստ Քաղաքացիական օրենսգրքում այդ հասկացության լայն մեկնաբանության: Շահագրգիռ անձ կարող են լինել նաև փոխկապակցված անձը, իրավական շահառուն և բարեխիղճ երրորդ անձ ձեռք բերողը: Վերջինի նեղ սահմանումը տրված է Օրենքի 23-րդ հոդվածում, իսկ առավել լայն սահմանումը ներկայացված է Քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածում:

## 7. Նախորդող հանցագործություններ

36. «Նախորդող հանցագործություններ» արտահայտությունը այստեղ օգտագործվում է պայմանականորեն, քանի որ այդ հասկացությունը որպես ինքնուրույն եզրույթ օգտագործվում է փողերի լվացման հանցակազմի շրջանակում՝ որպես հանցավոր արարք (պրեդիկատ), որը նախորդել է փողերի լվացման հանցագործությանը և որի միջոցով ստացվել է այն գույքը կամ եկամուտը, որի ծագումը քողարկելու նպատակով կատարվել է փողերի

վլացումը: Այդ արտահայտությունը այստեղ օգտագործվում է այն իմաստով, որ ապօրինի ծագում ունեցող գույքը ստացվել է գույքի բռնագանձման վարույթին նախորդող հանցագործությամբ:

37. **Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի** 4-րդ կետի ցանկում շարադրված են Քրեական օրենսգրքով սահմանված հանցագործությունների ցանկը, որոնց արդյունքում ձեռք է բերվել գույքը, որը ենթակա է բռնագանձման Օրենքի 5-րդ հոդվածի 1-4 կետերի հիման վրա հարուցված վարույթների միջոցով:
38. Միջազգային իրավունքում (վերևում նշված հինգ միջազգային կոնվենցիաներում) սահմանված է մոտեցում, որ քաղաքացիական բռնագանձման նպատակը պետք է լինի հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձումը, որի շրջանակում չի պահանջվում, որ գույքի և հանցագործության միջև կապը հիմնավորվի մեղադրական դատավճռով, սակայն պարտադիր է հիմնավորելը, որ տվյալ գույքն ունի **որոշ առնչություն** հանցագործության հետ: Այս մոտեցումը պայմանավորված է նրանով, որ հանրային ու մասնավոր շահերը արդարացիորեն փոխհավասարակշռվում են այն դեպքում, երբ քաղաքացիական բռնագանձման նպատակը հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձումն է, և երբ նախորդող հանցագործությունների ցանկը օրենքում լայն չէ, ընդգրկում է այնպիսի հանցավոր արարքներ, որոնց միջոցով ստացվում կամ գեներացվում է գույք և եկամուտներ:
39. ՖԱԹՖ-ի 4-րդ հանձնարարականում առաջարկվում է քաղաքացիական բռնագանձման վարույթները հարուցել փողերի վլացման, այդ հանցագործության նախորդող (պրեդիկատ) հանցագործությունների, ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների հիմքերով: Վենետիկի հանձնաժողովը առաջարկում է հանցագործությունների տեսակները սահմանել ըստ դրանց որակական հատկանիշների, հիմնվելով տնտեսական եկամուտներ գեներացնելու հնարավորության հատկանիշի վրա, և դա զուգակցել (այլ ոչ թե կիրառել որպես այլընտրանք) հանցագործության լրջության/ծանրության աստիճանի հետ:<sup>6</sup>
40. Օրենքում սահմանված ցանկը ընդգրկում է մեծամասամբ այնպիսի հանցագործություններ, որոնք իրենց բնույթով լուրջ հանցագործություններ են,

---

<sup>6</sup>«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (վենետիկի հանձնաժողով) 2024թ. մայիսի 22-ի [CDL-PI\(2024\)010](#) հրատապ կարծիքը Հանցավոր գործունեությունից ստացված նյութական հասույթի առգրավման ու բռնագանձման մասին Մոնտենեգրոյի օրենքի նախագծի վերաբերյալ: Կետ 19:

դրանց միջոցով ստացվում ու գեներացվում են հանցավոր գույք ու եկամուտներ, և դրանց մեծ մասը փողերի լվացման հանցագործության նախորդող հանցագործություններ են:

## 8. Գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածը և ապացույցները

41. Օրենքը կառուցված է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի հիման վրա, ըստ որի բռնագանձման ենթակա գույքը համարվում է անօրինական ծագում ունեցող գույք, քանի դեռ չի ապացուցվել գույքի ձեռքբերման օրինականությունը (հոդված 22): Այն պահից, երբ սկսում է գործել կանխավարկածը, ապացուցման բեռը հայցվորից (իրավասու հանրային մարմնից) փոխանցվում է քաղաքացիական պատասխանողի վրա: Այդ պահը իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության արդյունքների **նախնական ամփոփագրի** կազմումն է, որով այդ մարմինը կայացնում է որոշում գույքի բռնագանձման դատական հայց հարուցելու մասին, որի հիման կիրառվում են ապահովման միջոցներ և որի հիման վրա իրավասու մարմինը առաջին անգամ տեղեկացնում է շահագրգիռ անձին վարույթի առկայության մասին և նրանց հրավիրում է ներկայացնել ապացույցներ գույքի անօրինական ծագումը հերքելու մասին (հոդված 16): Այդ պահից սկսած և մինչև ուսումնասիրության ու դատաքննության ավարտը շահագրգիռ անձն է կրում ապացուցման բեռը:
42. Վերը նկարագրված մեխանիզմը արդեն հաստատուն կերպով ընդունված է միջազգային իրավունքում և բազմաթիվ պետությունների ներպետական իրավական համակարգերում: Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 8-րդ կետում նշվում է, որ Մասնակից Պետությունները կարող են սահմանել կարգավորում, որ իրավախախտը<sup>7</sup> ապացուցի հանցագործություններից ստացված եկամուտների և այլ գույքի օրինական ծագումը, որոնք ենթակա են բռնագանձման:
43. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ ապացուցման բեռը պատասխանողի վրա սահմանելը չի հակասում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին (արդար դատաքննության իրավունքին) քրեական կամ քաղաքացիական վարույթներում, և ոչ էլ դա խախտում է հանրային ու մասնավոր շահերի համամասնությունը գույքային իրավունքին միջամտելիս՝ Թիվ 1

<sup>7</sup> Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի հայերեն տեքստում 31-րդ հոդվածի 8-րդ մասում «իրավախախտ» եզրույթը սխալմամբ թարգմանված է «հանցագործություն կատարած անձը» արտահայտությամբ, որն էապես փոխում է նախադասության իմաստը, քանի որ դրանով, ըստ էության, հերքվում է քաղաքացիական բռնագանձման վարույթը, որն անընդունելի է:

արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա: Եթե քրեական վարույթում մեղադրյալի վրա ապացուցման բեռը սահմանելը հակակշռվում է նրանով, որ այդ կերպ ստացված ապացույցը չի կարող լինել առանցքային ապացույց մեղադրական դատավճռում, քաղաքացիական բռնազանձման վարույթներում ապացուցման բեռը պատասխանողի վրա դնելը հակակշռվում է պատասխանողի դատավարական երաշխիքներով, օրինակ՝ մրցակցային դատավարության ընձեռած հնարավորություններով:<sup>8</sup>

44. **Գույքի ապօրինի ծագման կանխավարկածը (ապացուցման բեռը պատասխանողի վրա սահմանելը) խնդրահարույց է, եթե դա չի հակակշռվում կանխավարկածի ապացուցման (կամ հերքման) հստակ, որոշակի կանոններով:** Օրենքում գործում են Քաղաքացիական դատավարության օրենսգրքի ապացուցման կանոնները, որի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատարանը փաստի հաստատված լինելը գնահատում է *«ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ»*: Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ այս չափանիշը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին,<sup>9</sup> և առաջարկել է Օրենքում ավելացնել «հավանականությունների հավասարակաշռության» չափանիշը, ըստ որի գույքի ապօրինի ծագումը հաստատվի հավանականությունների հավասարակաշռությամբ: Սակայն, Վենետիկի հանձնաժողովի այս առաջարկությունը չի ընդունվել:<sup>10</sup>
45. «Հավանականությունների հավասարակաշռում» ապացուցման չափանիշը սահմանված է շատ պետությունների քաղաքացիական բռնազանձման օրենքներում: Դա սահմանում է շատ ավելի ցածր ապացուցողական շեմ, քան քրեական դատավարությունում «ողջամիտ կասկածից վեր» չափանիշը, սակայն սահմանում է փոքր ինչ բարձր շեմ, քան «ապացույցների գերակայության» կամ «ավելի հավանական է՝ այո, քան՝ ոչ» չափանիշը, որ

<sup>8</sup> [Քաթերն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (որոշ.), թիվ 41661/98, ՄԻԵԴ, 27/06/2002: Էջ 8:

<sup>9</sup> Վենետիկի հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի [CDL-AD\(2022\)048 խորհրդատվական կարծիքը](#): Կետ 35:

<sup>10</sup> «Հավանականությունների հավասարակաշռության» ապացուցման չափանիշը առկա էր Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին օրենքի նախագծում, սակայն ինչ որ պատճառով դա հեռացվել է մինչև օրենքի ընդունումը: Այդ չափանիշը հետևյալն էր. **«Հավանականությունների հավասարակաշռում – գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը գնահատելու ապացուցողական չափանիշ, որով փաստը համարվում է հաստատված կամ հերքված, եթե դրա առկայությունը կամ բացակայությունը ավելի հավանական է»**:

որոշ պետություններ օգտագործում են քաղաքացիական բռնազանձման վարույթներում:

46. Եվրոպական դատարանը ընդունել է, որ «հավանականությունների հավասարակշռության» և «գույքի հանցավոր ծագման բարձր հավանականության» չափանիշները բավարարում են Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաչափության սկզբունքը,<sup>11</sup> կարող են հակակշռել գույքի ապօրինի ծագման կանխավարկածի ուժով անձի սեփականության իրավունքի միջամտությանը, որն իրականացվում է գույքի նկատմամբ ապահովման միջոցներ և բռնազանձում կիրառելով: Վերջինը (բռնազանձումը) Եվրոպական դատարանը համարում է խորը, ներխուժող բնույթի միջամտություն՝ ընդհուպ մինչև այն, որ նման միջամտությունը խստության աստիճանով անձի վրա իր բացասական ազդեցությամբ կարող է, որոշ հանգամանքներում, հավասարազոր լինել քրեական մեղադրանքի կամ քրեական պատժի՝ «Էնգելի» չափանիշի հիման վրա<sup>12</sup> (տե՛ս կետ 64 ներքևում):
47. Տարբեր պետությունների դեմ կայացրած վճիռներում, Եվրոպական դատարանը անդրադարձել է քաղաքացիական բռնազանձման տարբեր համակարգերի, վարույթների հարուցման ու ապացույցների տարբեր չափանիշների, սակայն բոլորի համար ընդհանուր են եղել հետևյալ երեք վարույթային առանձնահատկությունները. առաջին, վարույթները հարուցվել են գույքի՝ ենթադրաբար հանցավոր ծագում ունենալու կասկածի կամ կանխավարկածի հիման վրա, երկրորդ, ապացուցման բեռը կրել են պատասխանողները, երրորդ, ապացուցումը կատարվել է ապացուցման ցածր չափանիշի՝ հիմնականում «հավանականությունների հավասարակշռման» ապացուցի չափանիշի հիման վրա:

**Օրինակ՝** Անգլիայի՝ [Հանցագործությունից ստացված եկամուտների մասին](#) 2002 թվականի օրենքի համաձայն, անձի դատապարտման դեպքում դատարանը պետք է այնուհետև որոշի, թե արդյոք դատապարտյալը վարել է *հանցավոր ապրելակերպ*, եթե այո, հաջորդ քայլով պետք է որոշի, թե արդյոք մեղադրյալը ստացել է հանցավոր հասույթներ, որը վերլուծելիս դատարանը պարտավոր է կիրառել հետևյալ չորս կանխադրույթները.

<sup>11</sup> [Գոգիպիձենն ու այլոք ընդդեմ Վրաստանի](#), թիվ 36862/05, ՄԻԵԴ, 12/05/2015: Կետ 107

<sup>12</sup> Տողատակի ծանոթագրություն 13:

- առաջին, քրեական գործի հարուցմանը նախորդող վեց տարվա ընթացքում ստացված հասույթները ունեն հանցավոր ծագում,
- երկրորդ, դատապարտման հաջորդող ժամանակահատվածում ստացված հասույթները ունեն հանցավոր ծագում,
- երրորդ, քրեական գործի հարուցմանը նախորդող վեց տարվա ընթացքում կատարված ծախսերը բխել է հանցավոր գործունեությունից,
- չորրորդ, բոլոր նշված հասույթները ստացվել են առանց տոկոսադրույթների (վերջինը արվում է զուտ բռնագանձման չափը հաշվարկելու համար):

Դատապարտյալն է կրում նշված կանխավարկածները հերքելու պարտականությունը: Չհերքված փաստերի կանխավարկածի ուժով դատարանը որոշում է բռնագանձման չափը:

Այս օրենքի նախորդ տարբերակը, որը գործում էր 1994 թվականից մինչև 2002 թվականը, Եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է Կոնվենցիային բավարարող:<sup>13</sup>

48. Այն հանգամանքը, որ Օրենքում բացակայում է «հավանականությունների հավասարակշռում» ապացուցման չափանիշը, իսկ դրա փոխարեն օգտագործվում են քաղաքացիական դատավարության ապացուցման ընդհանուր չափանիշները, կարող է խնդրահարույց լինել գույքային իրավունքների միջամտության համաչափության ապահովման տեսանկյունից, քանի որ Քաղաքացիական դատավարության ապացույցների այդ ընդհանուր չափանիշները նախատեսված չեն եղել այնպիսի իրավահարաբերության համար, որտեղ փաստի կանխավարկածի ուժով ապացուցման բեռը ամբողջությամբ անցնում է կողմի վրա, մինչդեռ քաղաքացիական դատավարությունում ավանդաբար գործել է ապացուցման բեռի հավասարապես բաշխման սկզբունքը, որի համար էլ ի սկզբանե նախատեսված են եղել օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի չափանիշները:
49. Նման հանգամանքում, երբ վարույթի հենց սկզբից պատասխանողը գտնվում է հայցվորի համեմատ անհավասար դատավարական պայմաններում, քանի որ ամբողջությամբ կրում է ապացուցման բեռի սպասարկման

<sup>13</sup> <sup>13</sup> [Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության](#), թիվ 41087/98, ՄԻԵԴ, 05/07/2001:

պարտականությունը, հաշվի առնելով նաև հավելյալ երկու գործոնները, որոնք էլ ավելի են ծանրացնում պատասխանողի ապացուցման բեռը, որոնք են, առաջին, Օրենքի տարածումը նախորդող երկարատև ժամանակահատվածի վրա (կետ 50-59 ստորև), երկրորդ, նախորդող հանցագործությունների լայն շրջանակը, առանձնապես կարևոր է, որ քաղաքացիական դատարանը պատասխանողի նկատմամբ այդ բոլոր բացասական գործոնները հակակշռի պատասխանողի համար մրցակցային դատավարության արդյունավետ հնարավորությունների ընձեռմամբ, որ պատասխանողը անհամաչափ ծանր ապացուցման բեռի տակ չհայտնվի իր դատավարական հակառակորդի համեմատ:

## **9. Վարույթի տևողությունը և ուսումնասիրության ժամանակահատվածը**

50. Վարույթի տևողությունը և ուսումնասիրության ժամանակահատվածը էական հանգամանքներ են գույքային իրավունքի միջամտության համաչափությունը գնահատելիս համար: Որքան երկար է տևում վարույթը (ուսումնասիրությունը և դատական քննությունը), այնքան երկար ժամկետով է գույքը մնում արգելանքի տակ, որը գույքային իրավունքները լրջորեն սահմանափակող միջոց է: Որքան ավելի երկար նախորդող ժամանակահատված է ընտրված ուսումնասիրության համար, այնքան ավելի դժվար է անցյալից ապացույցներ հավաքելն ու ամրագրելը՝ հատկապես դատավարության այն կողմի համար, որը պարտավոր է ապացուցել գույքի օրինական ծագումը, այլ ոչ թե գույքի արժեքի անհամապատասխանությունը օրինական եկամուտներին:
51. Ուսումնասիրության ժամանակահատվածը որոշում է ուսումնասիրություն իրականացնող մարմինը (իրավասու մարմինը): Ուսումնասիրության առավելագույն ժամկետը ուսումնասիրություն սկսելու մասին որոշումը կայացնելու պահից հետո երեք տարի է: Իրավասու մարմինը նաև իրավունք ունի ուսումնասիրության ժամկետը սահմանել ուսումնասիրությունն սկսելու մասին որոշումից տասը տարին նախորդող ժամանակահատվածը, իսկ եթե ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, իրավասու մարմինը կարող է սահմանել ուսումնասիրվող նոր ժամանակահատված՝ հետ գնալով մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21՝ ուսումնասիրության ժամկետը սահմանելով դրանից հետո ընկած ժամանակահատվածը (7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր):

52. Ուսումնասիրության ժամկետը մինչև տասը տարի ժամանակահատվածով, իսկ առանձնահատուկ հանգամանքների դեպքերում մինչև 1991 թվականը հետադարձ ուղղությամբ սահմանելու կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության և կանխատեսելիության ընդհանուր սկզբունքի տեսանկյունից: Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ օրենքը կամ օրենքի դրույթը լինի բավականաչափ հստակ ու որոշակի, զուրկ երկիմաստությունից և անհստակությունից, որպեսզի քաղաքացիների համար կանխատեսելի լինի իրենց արարքների հետևանքը: Իրավական որոշակիությունը նաև պահանջում է, որ օրենքը բավարար ճշգրտությամբ սահմանի հանրային մարմինների և պաշտոնատար անձանց հայեցողության շրջանակը, ինչպես նաև նրանց հայեցողության իրականացման եղանակը, որպեսզի քաղաքացիները պաշտպանված լինեն կամայական որոշումներից կամ գործողություններից: Իրավական անորոշությունը ծագում է նաև կարգավորող օրենքի կամ նորմի բացակայությամբ, որի արդյունքում իրավահարաբերությունը, թեև ընդհանուր առմամբ կարգավորվում է հարակից օրենքներով սակայն՝ ոչ բավարար հստակությամբ ու որոշակիությամբ:
53. Գույքի առգրավման գործերով Եվրոպական դատարանը արձանագրել է իրավական որոշակիության սկզբունքի խախտում, երբ օրենքը չէր սահմանում առգրավման ենթակա գումարի վերին շեմ, չէր սահմանում առգրավման իրավական չափանիշներ, որի պատճառով վարչական մարմինը ստացել էր հայեցողության անսահմանափակ հնարավորություն, որի արդյունքում, ըստ հաստատված պրակտիկայի, վարչական մարմինը բոլոր գործերով բռնագանձումը ինքնաբերաբար կիրառում էր քաղաքացու ամբողջ գույքի վրա՝ առանց ելնելու վարույթային անհրաժեշտությունից ([Իմերին ընդդեմ Ալովենիայի](#), թիվ 77668/14, 24/06/2021, կետ 81):
54. Քաղաքացիական բռնագանձման գործերով Եվրոպական դատարանը արձանագրել է իրավական որոշակիության սկզբունքի խախտում նաև այն հիմքով, որ օրենքը սահմանում էր ուսումնասիրության 25 տարվա հետադարձ ժամանակահատված, որը պատասխանողների համար ստեղծում էր անհամաչափ ծանր բեռ գույքի օրինական ծագման վերաբերյալ ապացույցներ հավաքելիս՝ հատկապես հաշվի առնելով, որ 1990-ականները Բուլղարիայում աչքի էին ընկել տնտեսական անկայունությամբ, ստվերային տնտեսությամբ, հայտարարագրման չկայացած համակարգով ([Թողորովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 50705/11, 13/07/2021, կետ 210):

55. Վենետիկի հանձնաժողովը Օրենքի վերաբերյալ տված մասնագիտական կարծիքում արտահայտել է մտահոգություններ Օրենքի հետադարձության նորմերի վերաբերյալ: Նշելով, որ Օրենքի հետադարձ կիրառելիությունը որպես այդպիսին չի հակասում Եվրոպական կոնվենցիային, Հանձնաժողովը միևնույն ժամանակ նշել է, որ հետադարձության «հնարավորությունը» բավարար չափով չի «սահմանվել» ու «հիմնավորվել» Օրենքում՝ ակնհայտորեն նկատի ունենալով, որ **7-րդ հոդվածի 3-րդ մասի միակ հիմնավորումը նոր ապացույցներ ի հայտ գալու մասին բավարար չէր**, քանի որ կարգավորումը անհստակ է ու անորոշ՝ չապահովելով բավարար կանխատեսելիություն: Հանձնաժողովը միևնույն ժամանակ գտել է, որ **մինչև 1991 թվականը օրենքի հետադարձությունը ինքնին չափազանց երկար է՝** հատկապես հաշվի առնելով, որ ժամանակի հոսքի հետ այդ ժամկետը էլ ավելի է երկարում (կետ 53):
56. Վենետիկի հանձնաժողովը նաև գտել է, որ Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը նույնպես խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից, քանի որ փոխանակ Օրենքում ամրագրվեր հետադարձության հստակ ժամկետ, դա ամբողջությամբ թողնվել է վարույթ իրականացնող պաշտոնատար անձի (տվյալ դեպքում դատախազի) հայեցողությանը, որը նույնպես հակասում է իրավական որոշակիության սկզբունքին (կետ 54):
57. Սահմանադրական դատարանը [ՍԳՈ-1776](#) որոշումում նույնպես անդրադարձել է 7-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կարգավորումներին իրավական որոշակիության ու կանխատեսելիության սկզբունքների ներքո: Իրավասու մարմնի կողմից իր հայեցողությամբ ուսումնասիրության ժամկետը որոշելու առումով Սահմանադրական դատարանը նշել է, որ իրավասու մարմինը ունի հայեցողության շրջանակ, որն ինքնին խնդրահարույց չէ, քանի որ շրջանակը որոշակիորեն սահմանափակվում է երկու օբյեկտիվ չափանիշներով՝ պաշտոնատար անձի պաշտոնավարման մեկնարկի պահով (բռնագանձման ենթակա է միայն այն գույքը, որը անձը ձեռք է բերել հանրային պաշտոնը ստանձնելուց հետո), և հանցագործության տեսակով, որի արդյունքում ձեռք է բերվել բռնագանձման ենթակա գույքը և որի առնչությամբ իրականացվում է գույքի բռնագանձման վարույթը: Ըստ Սահմանադրական դատարանի, նման կարգավորումը որոշակիության սահմանադրական պահանջի տեսանկյունից խնդրահարույց չէ, իսկ իրավակարգավորման առավել որոշակիացումը վերապահված է իրավակիրառին (կետ 312):

58. Նույն կարգավորումը իրավական որոշակիության ընդհանուր լույսի ներքո գնահատելով գույքային իրավունքի միջամտության համաչափության տեսանկյունից, Սահմանադրական դատարանը ժամանակ գտել է, որ Օրենքում սահմանված չէ գույքի բռնագանձման վաղեմության որևէ ժամկետ, ու որքան ժամանակը հոսում է, այնքան անձի համար ավելի առարկայական են դառնում իր գույքի առնչությամբ անորոշությունից բխող հետևանքները, հատկապես հաշվի առնելով, որ ուսումնասիրության ժամանակահատվածը սահմանված է մինչև 1991 թվականը, ու այդ հանգամանքը, ըստ Սահմանադրական դատարանի, *«պետք է անմիջապես հայտնվի օրենսդրի ուշադրության կենտրոնում»* (կետ 169):
59. Այսպիսով, Սահմանադրական դատարանը առաջարկել է օրենսդիր մարմնին սահմանել առավել հստակ կարգավորումներ իրավասու մարմնի հայեցողության շրջանակը հստակեցնելու առումով, երբ վերջինս որոշում է կոնկրետ իրավիճակում ուսումնասիրության ժամկետ սահմանել: Դա նշանակում է, որ քանի դեռ օրենսդիրը չի կատարել Սահմանադրական դատարանի այդ հրահանգը, քաղաքացիական բռնագանձման վարույթներում իրավասու մարմնի կողմից ուսումնասիրության ժամկետ սահմանելիս կարող են առաջանալ խնդիրներ, որոնք կարող են բացասաբար ազդել գույքային իրավունքի համաչափության պահանջի ապահովման վրա:

## 10. Վարույթի փոխհատվելիությունը քրեական վարույթի հետ

### 1) Գույքի բռնագանձումը որպես քրեական հետապնդում որակելը

60. Քաղաքացիական բռնագանձման վարույթները հաճախ համեմատում են քրեական հետապնդման հետ: Պատճառը այն է, որ գույքի բռնագանձումը առավելապես քրեական պատժի, քան քաղաքացիական պատասխանատվության միջոցի տպավորություն է թողնում: Դա առաջին հերթին պայմանավորված է անձի նկատմամբ գույքի բռնագանձման բացասական ազդեցությամբ՝ և՛ հոգեբանորեն, և՛ նյութական իմաստով: Իսկ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում դա պայմանավորված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում *«քրեական մեղադրանք»* եզրույթի և 7-րդ հոդվածում *«պատիժ»* եզրույթի **ինքնավար մեկնաբանությամբ**, համաձայն որի քաղաքացիական, վարչական կամ կարգապահական (այդ թվում ծառայողական քննության) վարույթների շրջանակում անձի նկատմամբ **քաղաքացիական պատասխանատվության միջոցը, վարչական պատասխանատվության տույժը կամ կարգապահական**

**պատասխանատվության եղանակը իրենց բնույթով և խստությամբ պայմանավորված կարող են համարվել քրեական մեղադրանք՝ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, կամ՝ քրեական պատիժ՝ կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով:**

61. Դրա հետևանքը լինում է այն, որ բռնազանձման քաղաքացիական վարույթի շրջանակում դատախազի կամ դատարանի կողմից արտահայտած կարծիքը, համոզմունքը կամ եզրահանգումը կարող է համարվել, որ խախտել է պատասխանողի անմեղության կանխավարկածը: Այդ առումով Եվրոպական դատարանը ունի հետևողականորեն զարգացրած նախադեպային իրավունք: Ավելին, կարող է նաև արձանագրվել մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի խախտում՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքով, քանի որ քաղաքացիական վարույթի ընթացքում, եթե Եվրոպական դատարանը որոշի, որ իրականացվել է մեղադրանքի քննություն, կարող է արձանագրվել, որ չի ապահովվել անձի քրեադատավարական որոշ իրավունքներ, օրինակ, հակընդդեմ հարցման իրավունքը՝ անկախ այն հանգամանքից, որ ազգային համակարգում վարույթը իրականացվել է քաղաքացիական կամ վարչական օրենսդրության կարգով, որում նման իրավունք չի երաշխավորվում: Եվրոպական կոնվենցիայի տերմինների ինքնավար մեկնաբանությամբ Եվրոպական դատարանը հաճախ է բախվում ազգային համակարգում տվյալ տերմինի իրավական բովանդակությանը:
62. «Քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար բնույթը բխում է Եվրոպական դատարանի մոտ հինգ տասնամյակ առաջ սահմանված նախադեպային որոշումից, ըստ որի նորմի կամ վարույթի «քրեական» բնույթը որոշվում է հետևյալ երեք չափանիշներով, որոնք կիրառելի են միմյանցից անկախ.
1. Առաջինը նորմի (կամ վարույթի) դասակարգումն է ազգային իրավական համակարգում, այն է՝ արդյոք նորմը քրեական, քաղաքացիական, թե վարչական օրենսդրության նորմ է ազգային իրավական համակարգում (կամ բարեվարքության համակարգի էթիկական նորմ, որը, սովորաբար, կարգավորվում է վարչական օրենսդրությամբ):
  2. Երկրորդ չափանիշը տվյալ նորմի (կամ վարույթի) բնույթն է ու նպատակը: Եթե նորմը համընդհանուր կիրառում ունի, այլ ոչ թե նախատեսված է միայն մարդկանց որոշ խմբի համար, ավելի հավանական է, որ նորմը ունի քրեաիրավական կիրառություն: Կամ,

Եթե նորմի նպատակը իրավախախտին պատժելն է, ու հետապնդում է կանխարգելիչ, զսպող նպատակ, դա քրեաիրավական բնույթի նորմ է: Իսկ եթե նորմի նպատակը վարքագծի կարգավորումն է, դա վարչաիրավական (կամ կարգապահական, ընդհուպ՝ բարեվարքության) նորմ է: Եթե նորմի նպատակը վնասի հատուցումն է, տվյալ նորմը քաղաքացիաիրավական բնույթ ունի:

3. Երրորդը տվյալ նորմով (կամ վարույթով) նախատեսված պատասխանատվության միջոցի խստության աստիճանն է: Ազատազրկում սահմանող նորմերը, անկասկած, քրեաիրավական բնույթ ունեն, քանի որ ազատությունից զրկելը կանխարգելիչ ու պատժիչ նպատակ են հետապնդում: Հարկային պարտավորությունների խախտման համար նախատեսված տույժերը որպես կանոն վարչաիրավական բնույթի նորմեր են, սակայն որոշ հանգամանքներում դրանց խոշոր չափերը կարող են համարվել պատժող, կանխարգելող նորմեր:

63. Նշված երեք չափանիշները սահմանվել են *Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդերլանդների*<sup>14</sup> գործով Եվրոպական դատարանի 1976 թվականի վճռում (Էնգելի չափանիշներ), որոնք մինչև այժմ առանց փոփոխության կիրառվում են Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում և հսկայական ազդեցություն են թողել մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական իրավունքի, ինչպես նաև Եվրոպական կոնվենցիայի անդամ պետությունների ներպետական իրավական համակարգերի վրա:

64. Էնգելի չափանիշներից առաջինը, ինչպես նշվեց, էական չէ Եվրոպական դատարանի համար, քանի որ Եվրոպական դատարանը ազգային նորմի բնույթը մեկնաբանում է ինքնուրույն՝ անկախ ազգային օրենսդրությունում դրա դասակարգումից: Օրինակ, *Գոգիտիձեն ընդդեմ Վրաստանի* գործով վճռում Եվրոպական դատարանը որոշել է, որ թեև Վրաստանի օրենսդրությունում առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտը կոչվում էր վարչական բռնագանձում ու կարգավորվում էր վարչական օրենսդրությամբ, դա «իր բնույթով» լայնորեն հայտնի քաղաքացիական բռնագանձման *in rem* ինստիտուտն էր, որի հայեցակարգը նման էր միջազգային հանրության կողմից կիրառվող համանման հայեցակարգին, որի նպատակն էր անձի ապօրինի գույքի բռնագանձումը քաղաքացիական հայցի հիման վրա: Անկախ այն հանգամանքից, որ տվյալ

<sup>14</sup> [Էնգելն ու այլոք ընդդեմ Նիդերլանդների](#), թիվ 5370/72, ՄԻԵԴ, 08/06/1976, կետեր 82-83:

գործը Վրաստանում քննվել էր վարչական օրենսդրության ներքո, Եվրոպական դատարանը որոշեց, որ իր համար վարույթը քաղաքացիաիրավական բնույթի էր, հետևաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի էր:<sup>15</sup> Հակառակ դեպքում Եվրոպական դատարանը պետք է մերժեր գանգատը, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չի տարածվում վարչական դատավարության վրա:

65. Երկրորդ և երրորդ չափանիշները կիրառելի են միմյանցից անկախ: Երկրորդ չափանիշի մասին վերևում նշվեց, որ դրա գնահատման հիմքերից մեկն այն է, թե տվյալ նորմն ունի համընդհանուր կիրառում, թե՛ կիրառվում է մարդկանց որոշ խմբի նկատմամբ: Օրինակ, *Պահկուրարն ընդդեմ Ռումինիայի* գործում Եվրոպական դատարանի համար էական էր այն հանգամանքը, որ քաղաքացիական բռնագանձման վարույթը կիրառելի էր պաշտոնատար անձանց որոշ խմբերի նկատմամբ, հակառակ դեպքում, եթե վարույթը (և դրա հիմքում ընկած նորմերը) ունենային համընդհանուր կիրառում, Եվրոպական դատարանը կարող էր համարել, որ ազգային դատական վարույթը իր բնույթով քրեական էր, որի դեպքում գանգատը կքններ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի քրեադատավարական բաղադրիչի ներքո:<sup>16</sup>
66. Հայաստանի Հանրապետության դեմ կայացրած տարբեր վճիռներում Եվրոպական դատարանը, հիմնվելով երկրորդ և երրորդ չափանիշների վրա, որոշել է, օրինակ, որ կալանք նախատեսող վարչական տույժը իր խստությամբ ու հետապնդվող նպատակով քրեական բնույթի մեղադրանք ու պատիժ էր (ըստ երրորդ չափանիշի):<sup>17</sup> Հարկային օրենսդրությամբ սահմանված վարչական տույժերի մասով Եվրոպական դատարանը որոշել է, որ վարչական տույժերը, որոնց չափերը գերազանցում էին հարկային պարտավորության 60%-ը,<sup>18</sup> իրենց խստության աստիճանով հավասարազոր էին քրեական մեղադրանքի ու պատժի, թեև ՀՀ հարկային օրենսդրությունում դրանք վարչական տույժեր սահմանող նորմեր են: Նման եզրահանգման համար էական ազդեցություն են ունեցել ՀՀ կառավարության պնդումները, որ հարկային պարտավորությունների խախտումների համար նշանակված վարչական տույժերի նպատակը հարկատուներին պատժելն էր, ինչպես նաև կանխարգելելը, որ այլևս հարկատուները օրենքը չխախտեն: Եվրոպական դատարանը համարեց, որ նման նպատակները հարիր էին քրեական, ոչ թե

<sup>15</sup> *Գոգիպիձեն ու այլոք ընդդեմ Գերմանիայի*, թիվ 36862/05, ՄԻԵԴ, 12/05/2015, կետ 91:

<sup>16</sup> *Պահկուրարն ընդդեմ Ռումինիայի*, թիվ 17985/18, 24/06/2025, կետեր 124-132:

<sup>17</sup> *Գալստյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 26986/06, ՄԻԵԴ, 15/11/2007թ., կետեր 55-60:

<sup>18</sup> *ԶԱՊ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի*, թիվ 15485/09, ՄԻԵԴ, 04/15/2017թ., կետ 41:

վարչական իրավունքին, ու եթե վարչական նորմերը պատժիչ ու կանխարգելիչ նպատակ էին հետապնդում, այդ ամենը բավարար էր հաստատելու համար, որ վարչական նորմերի բովանդակությամբ քրեաիրավական էին:<sup>19</sup>

67. Ինչ վերաբերում է քաղաքացիական բռնագանձման ինստիտուտին, առաջին հայացքից դա ընկալվում է որպես քրեաիրավական նպատակ հետապնդող վարույթ, քանի որ բռնագանձումը խիստ բացասական հետևանք է առաջացնում անձի համար, հատկապես, որ բռնագանձումը որպես կանոն ընկալվում է որպես բռնագրավում, որը կատարվում է դատապարտման հիման վրա: Սակայն, որոշելու համար, թե քաղաքացիական բռնագանձումը, տվյալ հանգամանքների ներքո, պետք է դիտարկել քաղաքացիաիրավական, թե քրեաիրավական հարաբերություններում, կամ թե արդյոք քաղաքացիական բռնագանձման վարույթի շրջանակում որոշվում է մեղադրանքի մասին հարց, Եվրոպական դատարանը առաջնորդվում է Էնգելի չափանիշներով՝ հատկապես երկրորդով ու երրորդով:
68. Ըստ այդմ, Եվրոպական դատարանը որոշ գործերում որոշել է, որ քաղաքացիական բռնագանձման վարույթը իրականում հանդիսացել է քողարկված քրեական հետապնդում, որ քաղաքացիական վարույթի ընթացքում իրականում որոշվել է քաղաքացիական պատասխանողի հանցագործության կատարման մեղադրանքի հարց, հետևաբար, խախտվել է անձի անմեղության կանխավարկածը, քանի որ, ըստ Եվրոպական դատարանի, քաղաքացիական դատավարության ընթացքում անձին մեղսագրվել էր հանցավոր արարք:<sup>20</sup>
69. Այլ գործերով Եվրոպական դատարանը որոշել է, որ քաղաքացիական բռնագանձումը տվյալ դեպքում հանդիսացել է հանցագործության կատարման համար պատիժ՝ նույնիսկ քրեական հետապնդման և մեղադրական դատավճռի բացակայության պարագայում: Դատարանը հանգել է այդ եզրահանգմանը որոշելով, որ բռնագանձումը հետևապնդել էր ոչ թե վնասի հատուցման, այլ պատժողական նպատակ,<sup>21</sup> նաև, որ բռնագանձման մասին որոշումը, թեև օրենքով վարչական տույժ էր, ածանցվել էր քրեական գործի քննությունից, իսկ գույքի հանցավոր ծագումը հիմնականում հիմնավորվել էր քրեական գործի քննության շրջանակում:<sup>22</sup>

<sup>19</sup> [Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի](#), թիվ 21638/03, ՄԻԵԴ, 20/12/2007, կետ 33-35:

<sup>20</sup> [Գիհրինգսն ընդդեմ Նիդրելանդների](#), թիվ 30810/03, ՄԻԵԴ, 01/03/2007, կետ 50:

<sup>21</sup> [G.I.E.M. S.R.L.-ն ու այլոք ընդդեմ Իտալիայի](#), թիվ 1828/06, ՄԻԵԴ, 28/06/2018, կետ 233:

<sup>22</sup> [SUD FONDI SRL-ն ու այլոք ընդդեմ Իտալիայի \(որոշ.\)](#), թիվ 75909/01, ՄԻԵԴ, 20/01/2009:

70. Միևնույն ժամանակ, կրկին էնգելի չափանիշների կիրառումով, Եվրոպական դատարան որոշել է, որ անձի նկատմամբ արդարացման դատավճռի կայացումից անմիջապես հետո քաղաքացիական բռնազանձման վարույթ հարուցելը և գույքը բռնազանձելը քողարկված քրեական հետապնդում չէր հանդիսանում, քանի որ ավարտված քրեական վարույթը և դրանից հետո հարուցված քաղաքացիական վարույթը միմյանցից տարանջատված էին, **դրանք իրար հետ չէին փոխհատվում դատավարության ժամկետներով, ընթացակարգերով և բովանդակությամբ:**<sup>23</sup> Սա առանցքային փաստարկ է քաղաքացիական վարույթը փոխհատվող կամ զուգամիտվող քրեական կամ վարչական վարույթից տարանջատելու համար: Հետևաբար, ստորև դրանց անդրադառնում ենք մանրամասնորեն:

2) Վարույթների փոխհատվելը ժամկետներով, ընթացակարգերով, բովանդակությամբ

71. Էնգելի չափանիշների կիրառելիության հավանականությունը մեծանում է այն դեպքում, երբ քաղաքացիական բռնազանձման վարույթը և քրեական գործով վարույթը փոխհատվում կամ զուգամիտվում են իրենց **ժամկետներով, ընթացակարգերով** կամ **բովանդակությամբ:** Այս երեք գործոնները ենթակա են գնահատման կոնկրետ գործի հանգամանքներում: Դրանց առկայությունը ինքնին չի կանխորոշում քաղաքացիական բռնազանձման վարույթի շրջանակում քրեական մեղադրանքի առկայությունը: Կարևոր են մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, օրինակ, վարույթի նպատակները, որոշում կայացնող անձանց (դատավորների, դատախազների, վարչական վարույթ իրականացնող անձանց) մտադրությունը, ազգային օրենսդրության առանձնահատկությունը, և այլն:

72. Ինչ վերաբերում է ժամկետների փոխհատվելուն, դա գործոն է, որը կարող է բացահայտել ձախողված քրեական հետապնդումը «փրկելու» քաղաքացիական բռնազանձման վարույթի իրական նպատակը: Միևնույն ժամանակ, ժամկետների փոխհատվելը կարող է պայմանավորված լինել երկու վարույթների մեկտեղմամբ, որը կարող է բխել ազգային օրենսդրության առանձնահատկությունից:

**Օրինակ՝** [Գիհրինգն ընդդեմ Նիդերլանդների](#)<sup>24</sup> գործում Եվրոպական դատարանի քննության առարկան էր այն, որ մեղադրական

<sup>23</sup> [Ուոլշն ընդդեմ Միացյալ Թագավորության](#) (որոշ.), թիվ 43384/05, ՄԻԵԴ, 21/11/2006:

<sup>24</sup> [Գիհրինգն ընդդեմ Նիդերլանդների](#), թիվ 30810/03, ՄԻԵԴ, 01/03/2007:

դատավճռից անմիջապես հետո, որով մեղադրյալը թեև դատապարտվել էր, բայց միևնույն ժամանակ արդարացվել էր մի քանի դրվագներով, հարուցվել էր բռնագանձման վարույթ թմրանյութերի շրջանառության արդյունքում ստացված հասույթների բռնագանձման համար: Բռնագանձման վարույթը հարուցվել էր դատախազի դիմումով՝ այն գույքի և հասույթների բռնագանձման համար, որոնց առնչությամբ անձը արդարացվել էր: Դատախազը հիմնվել էր ապացուցման առավել ցածր չափանիշի վրա ու փաստարկել, որ կոնկրետ տվյալ վարույթի շրջանակում քրեական օրենքը թույլ էր տալիս, առանց նոր մեղադրանքի առաջադրման ու դատապարտման հեռանկարի, զուտ կասկածի հիման վրա, որ տվյալ հասույթները ամենայն հավանականությամբ ունեին հանցավոր ծագում, հարուցել բռնագանձման վարույթ: Ազգային դատարանը բավարարել էր դատախազի դիմումը և որոշել, որ վարույթը Եվրոպական կոնվենցիայի հիմքով չէր կարող համարվել քրեական, քանի որ դրա շրջանակում բացակայում էր առաջադրված մեղադրանք, ու թեև վարույթը հարուցվել էր քրեական օրենսգրքի հիման վրա, օրենքը թույլ էր տալիս բռնագանձել դատապարտյալի գույքը, որոնք ենթադրաբար ունեին հանցավոր ծագում, ու նման մոտեցումը ոչ մի կերպ չէր կարող մեկնաբանվել որպես մեղադրանքի հարցի քննություն: Եվրոպական դատարանը չի ընդունել փաստարկը ու գտել է, որ ազգային դատավորի եզրահանգումը բռնագանձման դատական ակտում ավելին էր, քան «*կասկածի մասին զուտ կարծիք հայտնելը*»:<sup>25</sup>

73. Վերը նշված օրինակում փոխհատվել էին ոչ միայն դատավարության ժամկետները, այլև ընթացակարգերը և բովանդակությունը: Ընթացակարգերի առումով վարույթները փոխհատվել էին, քանի որ ապօրինի ծագում ունեցող հասույթների բռնագանձման վարույթը հարուցվել էր նույն քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի հոդվածների հիման վրա, որոնք հնարավորություն էին տալիս, դատախազի դիմումի հիման վրա, դատապարտված անձի նկատմամբ հարուցել գույքի բռնագանձման առանձին վարույթ «անօրինական ցանկացած առավելությունից»

<sup>25</sup> Կետ 50:

դատապարտյալին զրկելու նպատակով:<sup>26</sup> Վարույթը կարող էր հարուցվել «ցանկացած առավելության» հանցավոր եղանակով ստացված լինելու զուտ կասկածի հիման վրա, ու վարույթի նպատակն էր հանցավորության կանխարգելումը, ոչ թե անձին պատժելը: Ստացվում էր, որ անձի դատապարտման ու բռնագանձման վարույթի իրավական ընթացակարգերը կարգավորվում էին միևնույն օրենքներով, իսկ իրականացվել էին մեկը մյուսին հաջորդաձև ընթացակարգերով: Նման իրավիճակը կարող էր օբյեկտիվ անաչառ դիտորդի մոտ թողնել տպավորություն, որ բռնագանձման վարույթը քողարկված քրեական հետապնդում էր:

74. Ինչ վերաբերում էր երկրորդ հանգամանքին՝ բովանդակության փոխհատվելիությանը, հիմքերից մեկը, որով Եվրոպական դատարանը համարեց, որ բռնագանձման վարույթը հետապնդում էր քրեաիրավական նպատակ, այն էր, որ բռնագանձումը տարածվել էր կոնկրետ այն հասույթների նկատմամբ, որոնց դրվագներով անձը մեղադրական դատավճռում արդարացվել էր:<sup>27</sup> Կարելի է պատկերացնել, որ եթե բռնագանձման վարույթները հարուցված լինեին այլ հասույթների կամ գույքի առնչությամբ, որոնք քրեական դատավարության առարկան չէին հանդիսացել, Եվրոպական դատարանի եզրահանգումը կարող էր տարբեր լինել:

**Օրինակ՝ [Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության](#)**<sup>28</sup> գործում քաղաքացիական բռնագանձման վարույթը իր ժամկետներով և ընթացակարգերով փոխհատվում էր (եթե ոչ մեկտեղվում) դատապատումից հետո պատժի սահմանման վարույթի հետ: Սույն գործում անձի դատապարտումից հետո դատախազի կողմից հարուցվել էր քաղաքացիական բռնագանձման վարույթ, որի շրջանակում դատախազը պահանջում էր դատապարտյալից բռնագանձել վերջին վեց տարվա ընթացքում նրա ձեռք բերած գույքը և այլ հասույթները (այդ պայմանը սահմանված էր օրենքով): Վարույթը հարուցվել էր օրենքով սահմանված «օրենսդրական ենթադրության» հիման վրա (որն ըստ էության փաստի կանխավարկած էր) առ այն, որ թմրանյութերի շրջանառության համար դատապարտված անձի՝ քրեական հետապնդման հարուցման օրվանը նախորդող վեց տարիների ընթացքում ձեռք բերված գույքը և

<sup>26</sup> Կետ 22-ում:

<sup>27</sup> Կետ 48-ում:

<sup>28</sup> [Ֆիլիպսն ընդդեմ Միացյալ Թագավորության](#), թիվ 41087/98, ՄԻԵԴ, 05/07/2001:

այլ հասույթները ամենայն հավանականությամբ ստացվել էին թմրանյութերի շրջանառության արդյունքում: Թեև ամբողջությամբ կիրառվում էին քաղաքացիական բռնագանձման վարույթի հատկանիշներ (օրինակ՝ «հավանականությունների հավասարակշռում» ապացուցման չափանիշը կամ «օրենսդրական ենթադրություն» փաստի կանխավարկածը՝ որպես վարույթի հարուցման հիմք), դատական քննության ընթացքում ծավալվեցին ընդհարձակ քննարկումներ այն հարցի շուրջ, թե արդյոք քաղաքացիական բռնագանձման ինստիտուտն ուներ մեղադրանքի քննության հատկանիշներ՝ ընդհուպ անմեղության կանխավարկածի խախտման մասին պնդումներով: Այդ պնդումների համար հիմք էր հանդիսացել այն հանգամանքը, որ բռնագանձման վարույթը իրականացվում էր պատժի սահմանման ու նշանակման վարույթի անալոգիայով, որը թողնում էր տպավորություն, որ բռնագանձման վարույթի շրջանակում իրականացվում էր մեղադրանքի հարցի քննություն: Այդուհանդերձ, էնգելի չափանիշների հիման վրա Եվրոպական դատարանը որոշեց, որ վարույթը չուներ քրեական հետապնդման վարույթի հատկանիշներ:

75. Այդպիսով, քաղաքացիական բռնագանձման վարույթը քողարկված քրեական հետապնդում չհամարվելու համար անհրաժեշտ է նախ և առաջ բացառել քրեական գործի քննության և քաղաքացիական բռնագանձման վարույթի միջև «կապը»: Այդպիսի կապի առկայությունը առավել հավանական է, երբ երկու վարույթները փոխհատվում կամ զուգամիտվում են դատավարության **ժամկետներով, ընթացակարգերով և բովանդակությամբ, ինչպես նաև, երբ քաղաքացիական բռնագանձումը իրապես կատարվում է քողարկված քրեական նպատակով:**

### 3) Անմեղության կանխավարկածը

76. Հիմնական իրավական հետևանքը, որ կարող է առաջանալ քաղաքացիական բռնագանձման վարույթի շրջանակում քրեական հետապնդման հատկանիշների առկայության դեպքում, անմեղության կանխավարկածի խախտումն է: Թեև դա հիմնականում քրեադատավարական կատեգորիա է<sup>29</sup>,

<sup>29</sup> Անմեղության կանխավարկածը կարող է նաև քաղաքացիական իրավունքի օբյեկտ լինել, օրինակ՝ համարվել վիրավորանք կամ զրպարտություն, սակայն դա չի վերաբերում այս ուղեցույցի թեմային:

սակայն դրա խախտումը կարող է «քրեական մեղադրանք» հասկացության ինքնավար մեկնաբանության ուժով վերագրվել քաղաքացիական հայցվորին՝ ուսումնասիրություն իրականացնող մարմնին, կամ դատարանին:

77. Անմեղության կանխավարկածի հարցը քաղաքացիական բռնազանձման վարույթներում կարող է բարձրանալ այն դեպքում, երբ նման վարույթը հարուցվում է քրեական հետապնդման դադարեցումից հետո, որի արդյունքում անձը չի դատապարտվում, օրինակ՝ արդարացման, մեղադրյալի մահվան, վաղեմության ժամկետի և այլ համապատասխան դեպքերում: Այս դեպքում գործում է անմեղության կանխավարկածի այսպես կոչված երկրորդ հատկանիշը, երբ քաղաքացիական բռնազանձումը կարող է համարվել քրեական հետապնդման հատկանիշ, օրինակ՝ մեղադրանքի առաջադրում, մեղադրանքի լուծում կամ քրեական պատժի սահմանում՝ նույնիսկ քրեական դատավարության կարգով առաջադրված մեղադրանքի բացակայության պայմաններում:<sup>30</sup> Հակառակ դեպքում, երբ քաղաքացիական բռնազանձումը իրականացվում է մինչև քրեական հետապնդման դադարեցումը կամ դրան զուգահեռ, սակայն դրանից զատ՝ այնպես, որ հնարավոր չէ պնդել, որ այդ վարույթով լուծվում է քրեական մեղադրանքի հարց, Եվրոպական դատարանը հակված է քաղաքացիական բռնազանձման վարույթի նպատակը համարել ոչ թե պատժիչ, այլ փոխհատուցող և կանխարգելիչ, հետևաբար՝ անմեղության կանխավարկածի խախտման հարց չի կարող բարձրանալ նման դեպքում:<sup>31</sup>
78. Հաշվի առնելով, որ բռնազանձումը գույքային իրավունքին «*առանձնապես խիստ ու ներխուժող սանկցիա է*»<sup>32</sup> որը որպես կանոն ընկալվում է որպես պատիժ, առավել մեծ է հավանականությունը, որ քաղաքացիական բռնազանձման վարույթի հարուցումը մեղադրյալի արդարացումից կամ այլ կերպ քրեական հետապնդման դադարեցումից հետո կարող է ընկալվել որպես քրեական հետապնդման շարունակություն քաղաքացիական բռնազանձման վարույթի քողի տակ:
79. Սակայն, զուտ քաղաքացիական բռնազանձման վարույթի հարուցումը քրեական գործի ավարտից հետո դեռ բավարար չէ պնդելու համար, որ քաղաքացիական վարույթը քրեական գործի շարունակությունն է արդարացումից հետո, հետևաբար, տեղի է ունեցել անմեղության կանխավարկածի խախտում: Անհրաժեշտ է նաև ցույց տալ **կապ** ավարտված

<sup>30</sup> [Գոգիփոժեն ու այլոք ընդդեմ Գերմանիայի](#), թիվ 36862/05, ՄԻԵԴ, 12/05/2015, կետ 125:

<sup>31</sup> Նույն վճիռը, կետ 126:

<sup>32</sup> [G.I.E.M. S.R.L.-ն ու այլոք ընդդեմ Իտալիայի](#), վկայակոչված վերևում: Կետ 227:

քրեական հետապնդման և դրանից հետո հարուցված քաղաքացիական վարույթի միջև: Այդ մասին խոսվել է վերևում, որտեղ նշվեց, որ նման կապը արտահայտված է, երբ վարույթները փոխհատվում կամ զուգամիտվում են ժամկետներով, ընթացակարգերով կամ բովանդակությամբ: Նման կապը կարելի է պնդել, որ առկա է հետևյալ հանգամանքներում.

- քաղաքացիական բռնագանձման վարույթում հետազոտվում են ավարտված քրեական վարույթի արդյունքները, օրինակ, դատարանը կատարում է մեղադրական դատավճռի վերլուծություն, քրեական գործի ապացույցների հետազոտում և գնահատում,
- հետազոտում է քաղաքացիական պատասխանողի՝ քրեական մեղադրանքի հիմքում ընկած բոլոր կամ որոշ դեպքերին մասնակցության մասին փաստեր,
- երբ քաղաքացիական գործով դատարանը մեկնաբանում է անձի հնարավոր մեղքը մատնանշող փաստեր:<sup>33</sup>

80. Երբեմն վերը նշված գործողությունները քաղաքացիական դատարանի կողմից կատարվում են **անհրաժեշտաբար՝ երբ դատարանի համար անհնարին է բռնագանձման մասին որոշումը կայացնել առանց անձի մեղքի առնչությամբ եզրահանգումներ կատարելու:**<sup>34</sup> Թեև, ըստ Եվրոպական դատարանի, կապը բռնագանձման վարույթի և ավարտված քրեական գործի միջև կարող է ստեղծվել քաղաքացիական գործով դատարանի օգտագործած և՛ բառապաշարով, և՛ հիմնավորումներով,<sup>35</sup> պետք է նաև հաշվի առնել վարույթի համատեքստը և բնույթը, ու այս իմաստով դատավորի կողմից մեղքի մասին անզգուշորեն ասված խոսքը դեռ չի նշանակում, որ բռնագանձման քաղաքացիական վարույթում դատավորը կատարել է «մեղադրանքի հարցի քննություն» ու այդ հիմքով խախտվել է անձի անմեղության կանխավարկածը:<sup>36</sup> Ուստի, քրեական հետապնդման ու քաղաքացիական բռնագանձման վարույթների միջև կապի առկայությունը դեռ հիմք չէ պնդելու համար, որ քաղաքացիական բռնագանձման վարույթում իրականացվում է մեղադրանքի հարցի քննություն ու այդ հիմքով խախտվել է անմեղության կանխավարձակը: Ուստի, շատ բան կախված է նաև օրենսդրությունից (ոչ միայն դատավորի գործողություններից),

<sup>33</sup> [Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության](#), (ՄՊ)թիվ 25424/09, ՄԻԵԴ, 12/07/2013: Կետեր 103-104:

<sup>34</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև Դատարանի եզրահանգումը 126-րդ կետում:

<sup>35</sup> [Լեզարդերն ընդդեմ Ֆրանսիայի](#), թիվ 18851/07, ՄԻԵԴ, 12/04/2012, կետ 82:

<sup>36</sup> [Ալենն ընդդեմ Միացյալ Թագավորության](#), կետ 126:

մասնավորապես, թե որքանով է օրենսդրական կարգավորումը ապահովում, որ կապը քրեական վարույթի և քաղաքացիական վարույթի միջև չհանգեցնի անմեղության կանխավարկածի խախտմանը:

**Օրինակ՝** [Ալենն քնդդեմ Միացյալ Թագավորության](#), (ՄՊ) թիվ 25424/09, ՄԻԵԴ, 12/07/2013:

Անձը դատապարտվել էր երեք տարվա ազատազրկման չորս ամսական երեխային անզգուշորեն մահ պատճառելու համար: Նա բողոքարկել է մեղադրական դատավճիռը այն հիմքով, որ դատապարտումը հիմնված էր այնպիսի բժշկական վարկածի վրա, որը հերքվում էր նոր ստացված բժշկական ապացույցներով: Վերաքննիչ դատարանը քննել է նոր բժշկական ապացույցները ու նշել, որ եթե այդ ապացույցների մասին տեղյակ լիներ առաջին ատյանի դատարանի ատենակալների կազմը, ամենայն հավանականությամբ դա կարող էր ազդած լինել նրանց որոշման վրա: Այս հիմքով վերաքննիչ քրեական դատարանը որոշել է, որ դատապարտումը կատարվել էր արդարադատության խաթարումով, բեկանել ու կարճել էր քրեական գործը: Մինչ այդ, անձը ազատվել է 16-ամսյա կալանքից: Քրեական գործի կարճումից հետո անձը առանձին վարույթով դիմել է վարչական մարմնին սխալ դատապարտման դիմաց փոխհատուցում ստանալու համար: Վարչական մարմինը, իսկ այնուհետև դատարանը որոշել են, որ բացակայում էր փոխհատուցման օրենքով սահմանված հիմքը, քանի որ քրեական գործը կարճվել էր ոչ արդարացման հիմքով: Անձը բողոքարկել է վարչական մարմնի որոշումը դատարան: Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի դատավորները գտել էին, որ քրեական վերաքննիչ դատարանը ըստ էության չէր կայացրել մեղքի մասին որոշում, այլ միայն եզրահանգել էր, որ եթե առաջին ատյանի դատարանի ատենակալները ունենային ավելի ուշ ստացված ապացույցները, նրանք կարող էին այլ որոշում կայացրած լինել: Դիմելով Եվրոպական դատարան, անձը նշել է, որ այդ արտահայտությամբ դատավորները կասկածի տակ էին դրել իր անմեղությունը քրեական գործի կարճումից հետո, հետևաբար, խախտվել է անմեղության

կանխավարկածը: Եվրոպական դատարանը որոշել է, որ փոխհատուցման վարույթով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորները անմեղության կանխավարկածը չէին խախտել, քանի որ որոշելու համար, թե արդյոք փոխհատուցման համար դիմումը բավարարում էր օրենքի չափանիշներին, նրանք, վարույթի բնույթից ելնելով, պարտավոր էին գնահատական գալ քրեական վերաքննիչ դատարանի կողմից քրեական գործը կարճելու մասին որոշմանը՝ պարզելու համար քրեական գործի կարճման հիմքերը, և թե արդյոք նոր ապացույցը ողջամիտ կասկածից վեր հիմք էր եզրահանգելու համար, որ արդարադատությունը առաջին ատյանի դատարանի կողմից սխալ էր կիրառվել: Հետապնդելով այդ նպատակին, դատավորները ոչ թե մեղքի մասին հայտարարություն էին արել, այլ նշել էին, որ եթե նոր ապացույցները ատենակալներին հասու լինեին, դա կարող էր ազդած լինել նրանց որոշման վրա:

81. Եվրոպական դատարանը վերը նշված մոտեցումը հավասարապես կիրառել է ՀՀ-ում քաղաքացիական բռնազանձման վարույթների նկատմամբ:<sup>37</sup> **Քաղաքացիական բռնազանձման վարույթները կարող են ինչ որ փուլում հատվել կամ զուգահեռ ընթանալ քրեական հետապնդման վարույթի հետ՝** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ից 4-րդ կետերից որևէ մեկի հիմքով: Ավելին, բռնազանձման վարույթը կարող է հատվել նաև 5-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերով հարուցված վարույթների հետ, եթե քաղաքացիական բռնազանձման վարույթին զուգահեռ, դրանից առաջ կամ հետո պաշտոնատար անձի նկատմամբ հարուցվի կամ հարուցված լինի քրեական գործ ապօրինի հարստացման հիմքով՝ բռնազանձման ենթակա գույքի մասին հայտարարագրերում տվյալ չնշելու փաստական հիմքով:
82. Ելնելով քաղաքացիական բռնազանձման վարույթի բնույթից ու նպատակներից, չի բացառվում, որ դատավարության ընթացքում դատավորին անհրաժեշտ լինի վկայակոչել կամ մատնացույց անել փաստեր կամ եզրահանգումներ ավարտված կամ զուգահեռ ընթացող քրեական գործից, հատկապես, որ քաղաքացիական բռնազանձման վարույթում բոլոր դեպքերում անհրաժեշտ է հիմնավորել գույքի հանցավոր ծագումը ոչ թե

<sup>37</sup> Տե՛ս Գոգիտիձեի գործով վճռի 125-րդ կետում, որում Եվրոպական դատարանը վկայակոչել է վերևում նշված գործը անմեղության կանխավարկածի հիմքով:

մեղադրական դատավճռի առկայությամբ այլ, ինչպես նշել է Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1776 որոշման մեջ, «որոշ հավաստիությամբ...որ բռնագանձման ենթակա գույքը կարող էր գեներացված լինել հանցավոր վարքագծի արդյունքում»: Այս իմաստով քաղաքացիական բռնագանձման գործը քննող դատավորը ինքնաբերաբար կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ ստիպված լինի հայտնել կարծիք կամ տալ գնահատական քրեական դատարանի կայացրած միջանկյալ կամ վերջնական դատական ակտի որևէ բաղադրիչի վերաբերյալ՝ ելնելով բացառապես քաղաքացիական գործի քննության նպատակներից, այլ ոչ թե նպատակ ունենալով հայտնել կարծիք հանցագործության կատարման մեջ անձի մեղքի մասին: **Նման հանգամանքում անհամաչափ կլինի պնդելը, որ դատավորը քաղաքացիական դատավարության շրջանակում խախտել է անմեղության կանխավարկածը:**

4) Այլ իրավական հետևանքներ

(i) *Կոնվենցիայի 6-րդ հոդված*

83. Որոշելով, որ քաղաքացիական (կամ վարչական) բռնագանձման վարույթը ունի քրեական հետապնդման տարրեր, մասնավորապես, որ բռնագանձման վարույթում որոշվել է քրեական մեղադրանքի մասին հարց, Եվրոպական դատարանը գործի քննությունը կարող է շարունակել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին ու 3-րդ մասերի քրեական բաղադրիչների ներքո (բացի 6-րդ հոդվածի 2-րդ մասի անմեղության կանխավարկածից) և որոշել, օրինակ, որ քաղաքացիական բռնագանձման վարույթում հնարավորություն չի տրվել անձին, ում Եվրոպան դատարան դիտարկում է մեղադրյալ, օգտվելու մեղադրանքից պաշտպանվելու իրավունքներից, օրինակ, հակընդդեմ հարցման իրավունքից (6-րդ հոդվածի 3-րդ մասի դ-կետ), կամ չի տրամադրվել բավարար ժամանակ ու հնարավորություն իր պաշտպանությունը կազմակերպելու համար, երբ ազգային դատարանը չէր բավարարել իր միջնորդությունը տրամադրելու ժամանակ հավելյալ ապացույցներ ներկայացնելու համար ((6-րդ հոդվածի 3-րդ մասի բ-կետ), և այլն: Թեև պրակտիկայում այդպիսի վճիռ դեռ չի կայացվել, սակայն տեսականորեն դա հնարավոր է: Բռնագանձման վարույթի փաստով ՀՀ-ի դեմ կայացված ՉԱՊ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործում Եվրոպական դատարանը արձանագրել է խախտում այն հիմքով, որ դիմումատուին հնարավորություն չէր տրվել հարցաքննել իր դեմ ցուցմունք տված վկաներին, այլ կերպ՝ իրացնել հակընդդեմ հարցման իրավունքը, որը թեև ՀՀ

օրենսդրությամբ քրեադատավարական երաշխիք է, սակայն Եվրոպական դատարանը այդ իրավունքի խախտումը արձանագրել է վարչական դատավարությունում:<sup>38</sup>

84. Մեկ այլ բռնագանձման գործով, որում հարկային մարմինը դիմել էր քաղաքացիական դատարան ընկերությունից չվճարված հարկային գումարները հավելյալ տույժերի հետ միասին բռնագանձելու պահանջով, Եվրոպական դատարանը, Էնգելի չափանիշների հիման վրա որոշել է, որ վարչական տույժերը կազմում էին հարկային վճարվելիք գումարի 10-50%-ը, որը զգալի գումար էր ու այդ հիմքով, Էնգելի երրորդ չափանիշի հիման վրա, որոշել է, որ տույժերը քրեական մեղադրանք էին, ու այդ հիմքով, գործը քննելով քրեական դատավարության կարգով, արձանագրե է դատարանի մատչելիության իրավունքի խախտում Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով:

*(ii) Կոնվենցիայի 7-րդ հոդված*

85. Ինքնավար մեկնաբանության ուժով եզրահանգելով, որ գույքի բռնագանձման մասին որոշումը իր բովանդակությամբ քրեական բնույթի պատիժ է, Եվրոպական դատարանը կարող գանգատը քննել Կոնվենցիայի 7-րդ հոդվածի հիմքերով: Այդ հիմքերից երկուսը ուղղակիորեն վերաբերում են քաղաքացիական բռնագանձման ինստիտուտին: Առաջինը «պատիժ» սահմանող օրենքի նորմերի որոշակիությունն է, երկրորդը օրենքի հետադարձ ուժի իրավաչափությունն է, որը գնահատվում է կամ իրավական որոշակիության, կամ համաչափության սկզբունքի շրջանակում: Երկուսի առումով էլ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի և Սահմանադրական դատարանի կողմից հնչել են վերապահումներ:
86. Իր նախադեպային իրավունքում, ՄԻԵԴ-ը մի շարք գործերով քաղաքացիական բռնագանձումը համարել է սահմանված պատիժ, որից հետո քննելով գործը ըստ էության, որոշել է, օրինակ, որ բռնագանձում սահմանող օրենքը չէր համապատասխանում իրավական որոշակիության ու կանխատեսելիության պահանջներին, քանի որ, օրինակ, հանցակազմին բնորոշ այնպիսի հատկանիշ, ինչպիսին է հանցագործության սուբյեկտիվ հատկանիշը (հանցավոր արարքը ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ

<sup>38</sup> [ՉԱՊ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի](#), թիվ 15485/09, ՄԻԵԴ, 04/15/2017թ., կետ 52:

կատարելը) սահմանված չէր բռնագանձման մասին վարչական օրենքում:<sup>39</sup> Մեկ այլ դեպքում Եվրոպական դատարանը որոշել է, որ քանի որ ազգային օրենսդրությունը թույլատրում էր քրեական դատավարությանը զուգահեռ վարչական բռնագանձում տարածել միայն դատավարությունում չներգրավված երրորդ կողմի վրա, իսկ Եվրոպական դատարանում տվյալ գործը քննվում էր որպես քրեական գործ (քանի որ վարչական բռնագանձումը համարվել էր քրեական պատիժ), ազգային դատարանի կողմից վարչական բռնագանձումը երրորդ կողմի վրա տարածելը Կոնվենցիայի 7-րդ հոդվածի խախտում էր, քանի որ այդ հոդվածի «պատիժ բացառապես օրենքով» հասկացությունում «օրենքով» եզրույթը վերաբերում էր ազգային օրենքին, որում արգելվում էր բռնագանձումը քրեական գործով տարածել երրորդ կողմի վրա:<sup>40</sup> Հետևաբար, բռնագանձում չէր կատարվել օրենքով սահմանված կարգով:

*(iii) Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդված*

87. Եվրոպական դատարանի կողմից քաղաքացիական բռնագանձումը «մեղադրանք» կամ «պատիժ» հասկացությունների ներքո դիտարկելը կարող է նաև առաջացնել իրավական հետևանքներ Կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ներքո՝ բռնագանձման օրինականությունը կամ համաչափությունը գույքային իրավունքների շրջանակում քննելիս: Օրինակ, վերևի ենթաբաժնում վկայակոչված վճիռներում Եվրոպական դատարանի կողմից 7-րդ հոդվածի խախտում արձանագրելը այն հիմքով, որ պատիժները (վարչական բռնագանձումները) օրենքով սահմանված չէին, ինքնաբերաբար հանգեցրել են նրան, որ գույքային իրավունքների միջամտությունը նույնպես Եվրոպական դատարանի կողմից ճանաչվել է, որ օրենքով սահմանված կարգով չէին կատարվել: Ավելին, առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման գործերով Եվրոպական դատարանը տեսնում է ուղղակի կապ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի, 7-րդ հոդվածի և Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի միջև, երբ անձի գույքը ենթարկվել է քաղաքացիական կամ վարչական բռնագանձման, որտեղ Եվրոպական դատարանը բռնագանձումը դիտարկում է որպես «մեղադրանք» կամ «պատիժ», մինչդեռ մեղքը հանցագործության կատարման մեջ չի հաստատվել:<sup>41</sup>

<sup>39</sup> [SUD FONDI SRL-ն ու այլոք ընդդեմ Իտալիայի \(որոշ.\)](#), թիվ 75909/01, 20/01/2009: Կետեր 114-115:

<sup>40</sup> [G.I.E.M. S.R.L.-ն ու այլոք ընդդեմ Իտալիայի](#), թիվ 1828/06, ՄԻԵԴ, 28/06/2018, կետ 274:

<sup>41</sup> [Վարվարան ընդդեմ Իտալիայի](#), 17475/09, ՄԻԵԴ, 29/10/2013, կետեր 65-66, 85:

## 5) Ուղեցույց

88. Ի մի բերելով վերը նշվածը, կարելի է դուրս բերել հետևյալ ուղեցույցերը կիրառողների համար:

- Հնարավորինս խուսափել միևնույն անձի վերաբերյալ հարուցված քրեական գործի քննությանը զուգահեռ քաղաքացիական բռնագանձման վարույթ իրականացնելուց՝ հատկապես, եթե միևնույն գույքը երկու վարույթների քննության առարկա է, սեփականատերը քրեական գործով մեղադրյալ է, իսկ քաղաքացիական բռնագանձման վարույթում ներգրավված է որպես շահագրգիռ անձ:
- Հնարավորինս խուսափել ոչ արդարացման կամ արդարացման հիմքով քրեական հետապնդման ավարտից **անմիջապես** հետո քաղաքացիական բռնագանձման վարույթ հարուցելուց, որը կարող է ստեղծել տպավորություն, որ երկրորդ վարույթը հարուցվել է ձախողված քրեական հետապնդումը փրկելու նպատակով:
- Խուսափել քաղաքացիական բռնագանձման վարույթի ընթացքում կամ դատական ակտում դատավորի կողմից քաղաքացիական պատասխանողին ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանցավոր արարքներ վերագրելը, հանցագործության կատարման մեղավորության մասին եզրահանգումներ անելը, գույքի բռնագանձումը որպես հանցավոր արարքի համար պատիժ ներկայացնելը: Այդուհանդերձ, եթե, ելնելով վարույթի բնույթից ու նպատակներից, դատավորի համար անհրաժեշտ է մատնացույց անել ապօրինի ծագում ունեցող գույքի հանցավոր եղանակով ստացված լինելու հնարավորությունը, այդ մասին կարծիք արտահայտելը ինքնաբերաբար չի խախտում անմեղության կանխավարկածը:
- Հնարավորինս բացառել կամ նվազեցնել քաղաքացիական բռնագանձման վարույթում քրեական գործի քննության արդյունքում ստացված ապացույցների օգտագործումից: Իսկ եթե դա հնարավոր չէ, անհրաժեշտ է խուսափել, որ նման ապացույցները **առանցքային** կամ **որոշիչ** նշանակություն ունենան քաղաքացիական գործի ելքի համար:

## 11. Ապահովման միջոցների և բռնագանձման համաչափությունը

89. Քաղաքացիական բռնագանձման վարույթը իրականացվում է անձի գույքային իրավունքների շարունակական միջամտությամբ: Օրինակ, ուսումնասիրության ընթացքում իրավասու մարմինը հավաքում է տեղեկություններ գույքի, գույքային իրավունքների մասին, որոնք կարող են նաև պարունակել անձնական, բանկային, առևտրային, հարկային և օրենքով պաշտպանված այլ գաղտնիքներ, որոնք նույնպես գույքային իրավունքի բաղադրիչներ են: Սակայն, գույքային իրավունքի առավել խորը և շոշափելի միջամտությունը տեղի է ունենում գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման և հայցի ապահովման միջոցներ կիրառելիս, որոնք արվում են իրավասու մարմնի միջնորդությամբ և դատարանի որոշմամբ՝ ինչպես սահմանված է Օրենքում (հոդված 14) և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերում:
90. Շատ կարևոր է, որ նախնական ապահովման ու հայցի ապահովման միջոցները (միասին՝ ապահովման միջոցներ) համապատասխանեն ոչ միայն օրինականության, այլև համաչափության սկզբունքին: Համաչափության ապահովումը ուսումնասիրության և դատաքննության փուլերում պատասխանողի իրավունքների էական սահմանափակումներին լուրջ հակակշիռ է, ու այդպես ապահովվում է ողջ վարույթի արդարացիությունը: Սահմանադրական դատարանը [ՍԳՈ-1776](#) որոշման մեջ սեփականության իրավունքի միջամտության համաչափության խնդրին անդրադարձել է որոշման 130-151 և 152-166 կետերում: Այդուհանդերձ, դրանցում չկան անդրադարձեր կոնկրետ նախնական ու հայցի ապահովման միջոցների համաչափության մասին:
91. Ապահովման միջոցների համաչափության մասին կարևոր ուղեցույցներ են տրամադրում [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 31-րդ հոդվածը և դրա դրույթների պաշտոնական մեկնաբանությունները այս կոնվենցիայի [տեխնիկական ուղեցույցում](#), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը և դրա դրույթների մեկնաբանությունները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում:

### Ա. Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի ուղեցույցները

92. [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 31-րդ հոդվածը տրամադրում է կարևոր ուղեցույցներ այն մասին, թե ինչպես համաչափորեն կիրառել արգելանքի միջոցները հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագրավման

տարբեր վարույթներում, այդ թվում նաև քաղաքացիական բռնազանձման վարույթներում: Կոնվենցիայի 31-րդ հոդվածում օգտագործվում են երեք եզրույթներ՝ սառեցում, առգրավում, բռնագրավում: Քաղաքացիական բռնազանձման վարույթի շրջանակում դրանք համապատասխանում են նախնական ապահովման, հայցի ապահովման և բռնազանձման միջոցներին:

93. Կոնվենցիայի 31-րդ հոդվածը առաջարկում է Մասնակից Պետություններին իրենց ներպետական օրենսդրությունում սահմանել հանցավոր ծագում ունեցող եկամուտների նկատմամբ ապահովման միջոցների և բռնազանձման կիրառման չորս ձևաչափ՝ ելնելով համաչափության սկզբունքից:

*1. Ապահովման միջոցները ապօրինի ծագում ունեցող գույքի և եկամուտների ողջ ծավալի նկատմամբ*

94. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ Մասնակից Պետությունները պետք է ապահովեն այնպիսի մեխանիզմներ, որ հնարավոր լինի կիրառել արգելանքի միջոցներ, հետագա բռնազանձման նպատակով, հանցագործություններից ստացված գույքի և եկամուտների նկատմամբ՝ այդ թվում նաև այնպիսի գույքի, սարքավորումների, այլ միջոցների նկատմամբ, որոնք (որպես գործիքներ) օգտագործվել են կամ նախատեսվել են իրավախախտումներ կատարելիս օգտագործելու համար:

95. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 1-ին մասի ուղեցույցը այն մասին է, որ ապահովման միջոցների կիրառումը կարելի է կիրառել հանցավոր ծագում ունեցող գույքի կամ եկամտի **ամբողջ ծավալի վրա**, ու որ դա համաչափ մոտեցում է հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ:

*2. Ապահովման միջոցները մասամբ կամ ամբողջությամբ այլ գույքի փոխակերպված կամ վերածված ապօրինի ծագում ունեցող եկամուտների նկատմամբ*

96. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ ապահովման միջոցները և բռնազանձումը պետք է տարածվեն ոչ միայն հանցագործության արդյունքում ստացված գույքի կամ եկամուտների վրա, որի մասին նշվեց վերևում, այլև նրանց, որոնք **վերածվել** կամ **փոխակերպվել** են այլ գույքի կամ եկամուտների:

96.1. Այլ գույքի **վերածվելը** (Կոնվենցիայի անգլերեն տեքստում օգտագործվում է transformed բառը) նշանակում է փոխել գույքի ձևը, բնույթը, կամ փոխել գույքի իրավական կարգավիճակը: Օրինակ,

կանխիկ գումարը անշարժ գույքի վերածելը, մեքենան վաճառելը և դրանով կրիպտոարժույթ գնելը:

96.2. Այլ գույքի **փոխակերպելը** (Կոնվենցիայի անգլերեն տեքստում օգտագործվում է converted բառը) նշանակում է փոխակերպել գույքի ձևը միևնույն կարգավիճակի շրջանակում, հիմնականում՝ վճարամիջոցը: Օրինակ, դրամը վերածել եվրոյի, գումարը վերածել կրիպտոարժույթի, և այլն:

**Օրինակներ՝** – Թմրանյութերի վաճառքից ստացված գումարներով մեքենա կամ տուն գնելը, որի արդյունքում հանցավոր ծագում ունեցող կանխիկ գումարը վերածվում է շարժական կամ անշարժ գույքի:

– Անապրանք գործարքների դիմաց ՀԴՄ դուրս գրելը, որի արդյունքում անօրինական կանխիկ գումարը վերածվում է ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված եկամտի,

– Կեղծ բանկային քարտի օգնությամբ արտասահմանյան օգտատերերի բանկային հաշվից գողացված գումարները կրիպտոարժույթի վերածելը:

– Գույքի գրավադրումով վարկ վերցնելը և վարկի վճարումը հանցավոր ծագում ունեցող գումարներով կատարելը: Այդպիսով հանցավոր ճանապարհով ստացված գումարը փոխակերպվում/վերածվում է վարկի սպասարկման օրինական գումարի:

97. Կոնվենցիայի [տեխնիկական ուղեցույցում](#) այս մոտեցումը բացատրվում է նրանով, որ հանցագործները առաջին իսկ հնարավորության դեպքում հանցագործության արդյունքում ստացված եկամուտները փորձում են վերածել կամ փոխակերպել այլ գույքի, որպեսզի թաքցնեն կամ խեղաթյուրեն եկամտի հանցավոր ծագումը՝ այդպիսով ածանցվող գույքը դնելով օրինական շրջանառության մեջ: Ածանցվող գույքի նկատմամբ հնարավորինս արագ ապահովման միջոց կիրառելը նաև օգնում է խուսափել պոտենցիալ

բարեխիղճ ձեռք բերողների հետ իրավահարաբերություններից, որն ավելի է բարդացնում քննությունը (տե՛ս Տեխնիկական ուղեցույցի 95-րդ էջում):

98. Հանցավոր ծագում ունեցող **եկամտից ածանցված ամբողջ գույքի** նկատմամբ ապահովման միջոց կիրառելը սեփականության իրավունքի համաչափ միջամտություն է՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հանրային շահի պաշտպանության իրավաչափ նպատակի համեմատ:

*3. Ապահովման միջոցները օրինական ծագում ունեցող գույքին խառնված ապօրինի ծագում ունեցող եկամուտների նկատմամբ*

99. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ այն դեպքում, երբ հանցավոր ծագում ունեցող եկամուտը **միացվել է** (խառնվել է) օրինական աղբյուրից ձեռք բերված գույքին, բռնագրավման ենթակա է այն գույքը, որը համապատասխանում է միացված (խառնված) եկամուտների գնահատված արժեքին:

**Օրինակ՝** Ա-ն ձեռնարկատիրական գործունեություն սկսելու նպատակով բանկից վերցրել է խոշոր գրավ՝ գրավադրելով իրեն պատկանող գույք: Մի քանի տարվա ընթացքում Ա-ին հաջողվել է վարկային միջոցներով կազմակերպել արդյունավետ ձեռնարկատիրական գործունեություն, որի արդյունքում ընդլայնվել են ընկերության ակտիվները: Որոշ ժամանակ անց իրավասու մարմինը գրավադրված գույքի անօրինական ծագման հիմքով սկսում է ուսումնասիրություն, որի արդյունքում նախնական ապահովման միջոց է կիրառվել ինչպես գրավադրված գույքի, այնպես էլ ընկերության ողջ ակտիվների վրա: Իրավասու մարմինը պնդում է, որ առկա է պատճառահետևանքային կապ գրավադրված գույքի և վարկի, վարկի և ընկերության ակտիվների միջև, նշանակում է ակտիվները ածանցվել են վարկից, իսկ վարկը՝ ապօրինի ծագում ունեցող գույքից, հետևաբար, ակտիվները ամբողջությամբ նույնպես ունեն անօրինական ծագում:

100. Այս օրինակում ապահովման միջոցը ընկերության **ողջ** ակտիվների նկատմամբ կիրառելը զուտ որակական չափանիշի հիման վրա (որն է՝ պատճառահետևանքային կապի առկայությունը), առանց հաշվի առնելու քանական չափանիշը (ապօրինի գույքի միջոցով ստացված վարկը, որը,

որպես ապօրինի ծագում ունեցող գույքից ստացված եկամուտ, միացել է օրինական գույքին՝ ընկերության ակտիվներին) սեփականության իրավունքի **անհամաչափ միջամտություն է**: Ըստ Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 5-րդ կետի, անօրինական գույքի և օրինական գույքի միախառնվելու արդյունքում օրինական գույքը (ընկերության ակտիվները) ինքնաբերաբար ամբողջությամբ չի վերածվում անօրինական գույքի, այլ դառնում է այդպիսին միայն անօրինական գույքի չափով, որը, եթե հնարավոր չէ ֆիզիկապես առանձնացնել օրինական գույքից, պետք է առանձնացնել գումարային եղանակով:

101. Այսինքն, վերը նշված օրինակում ապահովման միջոցը և բռնագանձումը պետք է կիրառվեն բացառապես գրավադրված գույքի կամ վարկի գումարի չափին համարժեք ընկերության դրամական միջոցների կամ համարժեք գույքի նկատմամբ՝ արտահայտված դրամական միավորով: Հակառակ դեպքում, եթե ապահովման միջոցը կիրառվի ընկերության ողջ ակտիվների նկատմամբ, դա կլինի սեփականության իրավունքի անհամաչափ միջամտություն՝ ի խախտումն ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի, 78-րդ հոդվածի, և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի:

*4. Ապահովման միջոցները շահույթների կամ եկամուտների նկատմամբ, որոնք գեներացվել են վերը նշված երեք խումբ ապօրինի ծագում ունեցող գույքից ու եկամուտներից:*

102. Կոնվենցիայի 31-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված է, որ ապահովման միջոցները և բռնագանձումը պետք է կիրառել շահույթների կամ եկամուտների նկատմամբ, որոնք ստացվել են հանցագործությունից ստացված գույքից, այն գույքից, որին վերածվել կամ փոխակերպվել են հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները, կամ այն գույքից, որին միացվել (խառնվել են) հանցագործություններից ստացված այդպիսի եկամուտները: Այլ կերպ ասած, 31-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսվում է ապահովման միջոցներ կիրառել այն շահույթների կամ եկամուտների նկատմամբ, որոնք ստացվել են վերը նշված երեք խումբ ապօրինի ծագում ունեցող եկամուտներից:

103. [Կոնվենցիայի տեխնիկական ուղեցույցում](#) նշվում է, որ այս դրույթի նպատակն է, որ պետությունները արգելադրման, առգրավման ու բռնագրավման միջոցներ կիրառեն ոչ միայն հիմնական, այլև երկրորդային հասույթների նկատմամբ: Երկրորդային հասույթներ են, օրինակ, հանցավոր ծագում ունեցող գումարի բանկային ավանդի արդյունքում ստացված

տոկոսավճարները: Այսինքն, հանցագործությունից ստացված հասույթի ցանկացած բարելավում, արտահայտված հասույթի արժեքով, նույնիսկ եթե ուղղակիորեն չի բխում հանցավոր արարքից և չի վերագրվում հանցավոր գործունեությանը, նույնպես պետք է ենթակա լինի բռնագանձման (էջ 95-96): Շահույթի կամ եկամուտների բռնագանձման նման եղանակը կլինի սեփականության իրավունքի համաչափ միջամտություն:

## **Բ. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի ուղեցույցները**

104. Եվրոպական դատարանը քաղաքացիական բռնագանձման վարույթների ապահովման միջոցները, այդ թվում նաև բռնագանձումը, դիտարկում է որպես հանրային մարմինների կողմից անձի սեփականության նկատմամբ **վերահսկողության ժամանակավոր միջոցի** կիրառում՝ Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի հիմքով, այլ ոչ թե սեփականության իրավունքից կամ սեփականության օգտագործման իրավունքից **զրկում** ([Թողորովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 50705/11), ՄԻԵԴ, 13/07/2021, կետ 181): Դա հնարավորություն է տալիս, տեսականորեն, ապահովման միջոցը ՀՀ-ում կիրառել առանց դատարանի որոշման, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 4-րդ մասով դատարանի որոշումը պարտադիր է միայն սեփականությունից զրկելիս (դա է պատճառը, որ, օրինակ, վարչական տույժերը գանձվում են առանց դատարանի նախնական որոշման): Այդուհանդերձ, Օրենքը առավել բարձր երաշխիք է սահմանում, քան Եվրոպական կոնվենցիան, պարտավորեցնելով ապահովման միջոցները կիրառել միայն դատարանի որոշմամբ՝ քաղաքացիական դատավարության ընդհանուր կարգով:

105. Քաղաքացիական բռնագանձման վարույթները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածով սահմանված սեփականության իրավունքի միջամտություն է ([Թողորովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 50705/11), ՄԻԵԴ, 13/07/2021, կետ 180), քանի որ նման վարույթների ընթացքում կամ արդյունքում քաղաքացիների սեփականության նկատմամբ կիրառվում են գույքի ապահովման (նախնական կամ դատական) միջոցներ կամ գույքի բռնագանձում:

105.1. Որոշ հանգամանքներում, հատկապես երբ ապահովման միջոցները կամ բռնագանձումն իրականացվում են պատժիչ կամ կանխարգելիչ նպատակներով, միջամտությունն իր բնույթով համարվում է «կոպիտ»

և «ներխուժող», այսինքն՝ անհամաչափ ([G.I.E.M. S.R.L.-ն ու այլոք ընդդեմ Իփայիայի](#), թիվ 1828/06, ՄԻԵԴ, 28/06/2018, կետ 227):

106. Ըստ Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասի՝ սեփականության իրավունքի **միջամտությունը հանրային մարմինների կողմից պետք է լինի օրենքով սահմանված կարգով**, որը նշանակում է, որ օրենքով պետք է սահմանված լինեն միջամտության (տվյալ դեպքում՝ ապահովման միջոցների և բռնագանձման) իրավական հիմքերը և ընթացակարգերը, ինչպես նաև, որ դրանց հիմքում ընկած իրավական նորմերը պետք է ձևակերպված լինեն բավարար հստակությամբ ու որոշակիությամբ, որպեսզի քաղաքացիների համար կանխատեսելի լինեն այդ հիմքերի բովանդակությունը, ինչպես նաև դրանցով սահմանված իրավունքները և պարտականությունները գույքային իրավունքներից օգտվելիս կամ իրավունքները պաշտպանելիս: Վերջինը վերաբերում է նաև դատավարական նորմերին, օրինակ՝ մրցակցային դատավարության, դատավարական իրավահավասարության կանոններին:
107. **Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքին միջամտող օրենքների կիրառումը պետք է արվի «ընդհանուր շահերին համապատասխան»:** Ըստ Սահմանադրական դատարանի, որոնք համահունչ են Եվրոպական կոնվենցիային, տվյալ դեպքում այդպիսին են օրենսդրի հետապնդած հետևյալ նպատակները՝ կոռուպցիայի դեմ պայքարը, հանցավորության դեմ պայքարը:
108. Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ մասում նաև սահմանվում է, ըստ Եվրոպական դատարանի մեկնաբանության, որ միջամտության եղանակը կամ գործիքները (տվյալ դեպքում՝ հայցի նախնական ու դատական ապահովման միջոցները և բռնագանձումը) պետք է տվյալ հանգամանքում խստորեն համաչափ լինեն հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ, որի համար այդ միջոցները պետք է այնպես կիրառել, որ վարույթի իրականացման հասարակական շահերը լինեն արդարացիորեն փոխհավասարակշռված անհատի գույքային իրավունքների ու շահերի հետ:
109. Այսպիսով, քաղաքացիական բռնագանձման վարույթը պետք է իրականացվի օրենքով սահմանված կարգով, հետապնդի իրավաչափ նպատակ և համաչափ լինի հանրային շահերի համեմատ: Ներկայացնենք Եվրոպական դատարանի ուղեցույցները դրանցից յուրաքանչյուրի մասով:

## 1) Օրենքով սահմանված կարգով

110. Կարգավորող օրենքում իրավահարաբերությունների անորոշ կարգավորումները կարող են հիմք հանդիսանալ Եվրոպական դատարանի համար որոշելու, որը Օրենքը չի համապատասխանում իրավական որոշակիության ընդհանուր պահանջին, հետևաբար՝ գույքի բռնագանձումը չի կատարվել օրենքով սահմանված կարգով:
111. Անորոշությունները կարող են վերաբերել Օրենքին նախորդող ժամանակահատվածի կարգավորմանը,<sup>42</sup> գույքի ապօրինի ծագում ունենալու իրավական հիմքերին,<sup>43</sup> գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի ապացուցման չափանիշի բացակայությանը կամ անորոշությանը, բռնագանձման չափերի (վերին շեմի) կարգավորման բացակայությունը,<sup>44</sup> գույքի շուկայական արժեքի հաշվարկման անորոշ մեթոդին:<sup>45</sup>
112. Որոշ դեպքերում, Եվրոպական դատարանը կարող է իրավակարգավորման անորոշությունը դիտարկել համաչափության սկզբունքի ներքո այն հիմքով, որ օրենքի անորոշ կարգավորումը (օրինակ, գույքի ապօրինի ծագում ունենալը) սեփականատիրոջ կամ դատավարության մասնակցի համար անհամաչափ ծանր բեռ է հանդիսացել:

## 2) Միջամտության նպատակի իրավաչափությունը

113. Թեև Եվրոպական դատարանը չի անդրադարձել նման խնդրի, սակայն, դատելով Դատարանի նախադեպային իրավունքից, նման խնդիր կարող է առաջանալ այն դեպքում, երբ քաղաքացիական դատավարության ընթացակարն օգտագործվի քողարկված քրեական հետապնդման նպատակով, կամ, քաղաքացիական բռնագանձման վարույթն օգտագործվի ոչ թե կոռուպցիայի դեմ պայքարի, այլ կոնկրետ անձից գույքը խլելու նպատակով՝ առանց հանրային շահի առկայության:

## 3) Միջամտության համաչափությունը

### (i) Դատավարական երաշխիքներ

114. Քաղաքացիական պատասխանողը պետք է ունենա իր դատավարական հակառակորդին համարժեք, արդյունավետ դատավարական

<sup>42</sup> [Դիմիտրովին րևոդեմ Բուլղարիայի](#), թիվ 12655/09, ՄԻԵԴ, 03/03/2015, կետեր 46-47):

<sup>43</sup> Նույն տեղում:

<sup>44</sup> [Իմերին րևոդեմ Իտալիայի](#), թիվ 77668/14, ՄԻԵԴ, 24/06/2021, կետ 81:

<sup>45</sup> [Թոդորովն ու այլոք րևոդեմ Բուլղարիայի](#), թիվ 50705/11), ՄԻԵԴ, 13/07/2021, կետ 209):

պաշտպանության երաշխիքներ: Սա հատկապես կարևոր է այն առումով, որ առկա են չորս հանգամանքներ, որոնց ուժով պատասխանողի հնարավորությունները խոցելի են իր դատավարական հակառակորդի նկատմամբ: Առաջինն այն է, որ Օրենքը կառուցված է գույքի անօրինական ծագման կանխավարկածի վրա, երկրորդը՝ նախորդող հանցագործությունների լայն ցանկն է, որում ներառված են նաև հանցագործություններ, որոնք դժվարությամբ են առնչվում հանցավոր եկամուտների ստացման ու գեներացման վտանգավոր արարքի հետ: Երրորդն այն է, որ որոշ դեպքերում չի պահանջվում հիմնավորել կապը բռնագանձման ենթակա գույքի և հանցավոր արարքի միջև, իսկ չորրորդը՝ օրենքի հետադարձելիությունն է բավականին երկարատև ժամանակահատվածով և դրա անորոշ կարգավորումները: Այս չորս գործոնների արդյունքում պատասխանողը կարող է հայտնվել անհամարժեք ծանր գույքային բեռի տակ՝ իր իրավունքները պաշտպանելիս, եթե այդ գործոնները չհակակշռվեն արդյունավետ դատավարական իրավունքներով, օրինակ, մրցակցային դատավարության երաշխիքերով:

115. Վերը նշվածը բխում է Եվրոպական դատարանի մոտեցումից, համաձայն որի քաղաքացիական (կամ վարչական) բռնագանձման վարույթներում միջամտության համաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում, թե, որպես հակակշիռ վերը նշված թերություններին, որքանով են դատավարական երաշխիքները մատչելի քաղաքացիական պատասխանողին՝ իր վրա դրված ապացուցման բեռը սպասարկելու համար: Եթե օրենքի կամ հանգամանքների ուժով քաղաքացիական պատասխանողը հայտնվում է **անհամարժեք ծանր բեռի տակ՝ իր իրավունքները պաշտպանելիս, մասնավորապես՝ գույքի օրինական ծագումը ապացուցելիս**, հանրային ու մասնավոր շահերի միջև հավասարակշռությունը կարող է թերվել ի հօգուտ հանրային **իշխանության՝** ի խախտումն համաչափության սկզբունքի:

**Օրինակ՝** [Յորդանովն ու այլոք ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 265/17, 6473/18, ՄԻԵԴ, 26/09/2023

- Օրենքը սահմանում է նախորդող հանցագործությունների լայն ցանկ, որում ընդգրկված հանցագործությունները վերաբերում էին ոչ միայն կազմակերպված հանցավորությանը, թմրանյութերի շրջանառությանը, կոռուպցիային և փողերի լվացմանը,

կամ հանցանքներ, որոնց միջոցով գեներացվում են հանցավոր եկամուտներ, այլև բազմաթիվ այլ հանցագործություններ, որոնք այդպիսին չեն հանդիսանում (կետ 115):

- Օրենքը կիրառելի է վարույթ հարուցելուն նախորդող տասը տարվա ժամանակահատվածի, այդ թվում նաև մինչև օրենքի ընդունումը ընկած ժամանակահատվածի նկատմամբ, և պատասխանողները ստիպված էին ձեռք բերել եկամուտների, գույքի, ծախսերի վերաբերյալ ապացույցներ նման երկար նախորդող ժամանակահատվածի համար, որը նրանց էական դժվարությունների առաջ էր կանգնեցնում գույքի օրինական ծագումը ապացուցելիս (կետ 116):
- Օրենքի նման երկար հետադարձ կիրառության պայմաններում դատարանները հրաժարվում էին ընդունել պատասխանողների վկաների հայտարարությունները՝ որպես ապացույցներ անցյալում տեղի ունեցած գործարքների վերաբերյալ, որով էլ ավելի էր ծանրացել պատասխանողների ապացուցման պարտականության բեռը, քանի որ նրանք ստիպված էին ապացույցները ձեռք բերել վաղ անցյալից (կետ 119):
- Բռնագանձման ենթակա գույքի և նախորդող հանցագործության միջև կապը հիմնավորելու կարևոր երաշխիքը բացակայում է օրենքում, որը հնարավորություն է տալիս ազգային դատարանին գույքի անօրինական ծագումը ճանաչել առանց մատնանշելու որևէ փաստ կամ ապացույց գույքի և հանցագործության միջև կապի մասին (կետ 121-122):
- Որպեսզի բռնագանձումը համապատասխանի համաչափության սկզբունքին, որպես օրենքի վերը նշված թերություններին հակակշռող գործոն, ազգային դատարանները պետք է գույքի անօրինական ծագումը հիմնավորելիս մատնացույց անեն բռնագանձման

ենթակա գույքը վարչական կամ քրեական իրավախախտմամբ ստացված լինելու հանգամանքը, և պատճառաբանված կերպով ցույց տան, որ իրավախախտման և գույքի միջև կարող էր լինել կապ (կետ 124):

- Ազգային դատարանը ցույց չի տվել բռնագանձման ենթակա գույքի և իրավախախտման միջև որևէ կապ: Դրա փոխարեն, դատարանը բռնագանձումը հիմնավորել է այն հիմքով, որ գույքն ուներ ապօրինի ծագում բացառապես այն պատճառով, որ դիմումատուն չէր ապացուցել օրինական եկամտի առկայություն, որով ձեռք էր բերել այդ գույքը: Այսպիսով, ազգային դատարանն իր որոշման մեջ չի անդրադարձել որևէ քրեական արարքի կամ զանցանքի, որը կարող էր հանդիսանալ բռնագանձման ենթակա գույքի ծագման աղբյուր, կամ որը կարող էր կապ ստեղծել այդ գույքի և նման գործողության միջև (130-131):
- Դատարանը կրկին վերահաստատում է, որ որպեսզի քաղաքացիական բռնագանձումը համապատասխանի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջին, ազգային մարմինները պետք է հիմնավորեն որևէ քրեական արարքի կամ վարչական իրավախախտման առկայություն, որի արդյունքում ձեռք է բերվել բռնագանձման ենթակա գույքը, ինչպես նաև [պետք է հիմնավորեն] կապը նման արարքի և խնդրո առարկա գույքի միջև (138):

116. Վերը նշվածից կարելի է եզրահանգել, որ այն պարագայում, երբ քաղաքացիական բռնագանձման մասին օրենքը սահմանում է նախորդող հանցագործությունների լայն ցանկ, հետադարձ կիրառության երկարատև ժամանակահատված և գույքի ապօրինի ծագման կանխավարկած, որոնք իրենց ամբողջության մեջ էապես դժվարացնում են գույքի օրինականությունը հիմնավորելու քաղաքացիական պատասխանողի հնարավորությունները, վարույթի համաչափությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ դատարանը՝

- 1) հստակորեն ցույց տա բռնագանձման ենթակա գույքի իրավախախտմամբ (վարչական կամ քրեական) ստացված լինելը, և իրավախախտման ու գույքի միջև կապը,
- 2) ապահովի քաղաքացիական պատասխանողի համար լայն դատավարական հնարավորություններ գույքի օրինականությունը ապացուցելու համար:

117. Վերջինը հատկապես էական է այն դեպքում, երբ քաղաքացիական բռնագանձման օրենքը գործում է գույքի անօրինական ծագման կանխավարկածի հիման վրա, սակայն չի սահմանում այդ կանխավարկածը հերքելու ապացուցման որոշակի չափանիշներ: Վենետիկի հանձնաժողովը Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքի վերաբերյալ իր [խորհրդատվական կարծիքում](#) նշել է, որ համաչափության սկզբունքի ապահովման համար էական է, որ Օրենքում սահմանվի «հավանականությունների հավասարակշռության» ապացուցման չափանիշը<sup>46</sup>, որը Եվրոպական դատարանի կողմից ընդունվել է որպես Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաչափության սկզբունքի պահանջներին բավարարող պայման:<sup>47</sup>

118. Այսպիսով, այն հանգամանքներում, երբ Օրենքը մի կողմից հիմնված է գույքի ապօրինի ծագում ունենալու կանխավարկածի վրա (որի դեպքում դատարաններից չի պահանջվում ցույց տալ գույքի և նախորդող իրավախախտման միջև կապ) և սահմանում է Օրենքի հետադարձության երկարատև ժամանակահատված, կանխավարկածի հերքման «հավանականությունների հավասարակշռության» ապացուցման չափանիշի բացակայությունը իր հերթին նույնպես կարող է խախտել համաչափության սկզբունքը, քանի որ նման պայմաններում քաղաքացիական պատասխանողը հայտնվում է անհամաչափ ծանր բեռի տակ՝ գույքի օրինականությունը ապացուցելիս: Նման հանգամանքում միակ հակակշիռը կարող է լինել քաղաքացիական պատասխանողին մրցակցային դատավարության լայն երաշխիքներ ընձեռելը:

*(ii) Ապահովման և բռնագանձման միջոցներ*

119. Համաչափության սկզբունքը կարող է խախտվել նաև տվյալ իրավիճակում անհամարժեք ապահովման կամ բռնագանձման միջոցներ կիրառելիս: Նման

<sup>46</sup> Տե՛ս խորհրդատվական կարծիքի 23-րդ կետում

<sup>47</sup> Տե՛ս, նաև, [Գոգիտիձեն ու այլոք ընդդեմ Վրաստանի](#), թիվ 36862/05, ՄԻԵԴ, 12/05/2015, կետ 107:

իրավիճակ է առաջանում, երբ ապահովման միջոցը կիրառվում է ավելի մեծ արժեք կամ ավելի շատ միավոր գույքի վրա, քան իրավախախտման արդյունքում ստացված գույքը, երբ ապահովման միջոցը կիրառվում է ավելի երկար ժամանակահատվածով, քան դա օբյեկտիվորեն անհրաժեշտ է քննության համար, կամ երբ ապահովման միջոցի բացասական հետևանքը, վնասը ավելի մեծ է, քան սովորաբար նման միջոցները պատճառում են:

119.1. Օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է համաչափության մի շարք երաշխիքներ: 14-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է հայցի նախնական ապահովման վեց ամսվա ժամկետ: Այդ ժամկետը կասեցվում է, եթե իրավասու մարմինը կայացնում է ուսումնասիրության ընթացքը կասեցնելու մասին որոշում: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն, ապահովման միջոցը կարող է լրիվ կամ մասնակի վերացվել անձի դիմումի հիման վրա, եթե անձը հիմնավորում է, որ գույքի մի մասն արգելանքից ազատելն անհրաժեշտ է իր փաստաբանի ծախսերը կամ իր խնամքի տակ գտնվող անձանց ապրուստի ծախսերը հոգալու կամ ալիմենտի վճարման կամ կյանքի կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումներ կատարելու համար:

119.2. Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նույնպես սահմանում է համաչափության երաշխիքներ: 129-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հայցի ապահովման միջոցը պետք է համաչափ լինի ներկայացված պահանջին և հայցի ապահովմամբ հետապնդվող նպատակին: Այս ձևակերպումը համահունչ է Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին: Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է համաչափության երաշխիքներ իրավաբանական անձանց համար, ըստ որի հայցի ապահովման միջոցը չպետք է հանգեցնի իրավաբանական անձի գործունեության իրականացման փաստացի անհնարինության կամ նրա գործունեության համար ստեղծի էական խոչընդոտներ, կամ հանգեցնի իրավաբանական անձի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման:

120. Եվրոպական դատարանը համաչափության սկզբունքի խախտում է գրանցել, երբ ապահովման միջոցը ինքնաբերաբար կիրառվել է առավել մեծ ծավալով գույքի վրա, քան ծավալը, որի կապը/ծագումը նախորդող

հանցագործության/զանցանքի հետ հաստատվել է, ինչպես նաև, երբ ապահովման միջոցի ժամկետները պարբերաբար երկարաձգվել են, որոնք վիճարկելու հնարավորություն գույքի սեփականատերը չի ունեցել:

**Օրինակ՝ Շորագովան ընդդեմ Մալթայի**, թիվ 51853/19, ՄԻԵԴ, 03/03/2022:

- Փողերի վաճման մեղադրանքի հիմքով հարուցված քրեական գործով Ղազախստանի կառավարությունը միջազգային իրավական փոխօգնության շրջանակում դիմել է Մալթայի կառավարությանը՝ խնդրելով առգրավել ու բռնագանձել հանցավոր եկամուտներով ձեռք բերված մեղադրյալի գույքը Մալթայում: Մալթայի իշխանությունները արգելանքի միջոցները ինքնաբերաբար կիրառել են ողջ գույքի նկատմամբ՝ **առանց պարզելու հայցող պետության դիմումում փողերի վաճման հանցանքին նախորդող հանցագործությունների և բռնագանձման ենթակա գույքի միջև կապը:** Արդյունքում, ազգային դատարանը արգելանքը կիրառել է ողջ գույքի վրա, որի ծավալը ավելի մեծ էր, քան անձին վերագրված հանցագործության արդյունքում ստացված եկամուտները: Հետևաբար, արգելանքի միջոցը եղել է անհամաչափ միջամտություն գույքային իրավունքին՝ հաշվի առնելով արգելանքի ծավալը:
- Արգելանքը պահպանվել է ութը տարի: Ներպետական օրենքի համաձայն, արգելանքը կարող էր կիրառվել մինչև վեց ամիս: Տվյալ դեպքում արգելանքի ժամկետները յուրաքանչյուր անգամ, առանց դատական քննության, ինքնաբերաբար երկարաձգվել են, որի մասին սեփականատերը յուրաքանչյուր անգամ դատարանի կողմից ծանուցվել է գրությամբ այն մասին, որ դատարանը բավարարել է դատախազի միջնորդությունը ապահովման միջոցը հերթական անգամ երկարաձգելու մասին: Գույքի սեփականատերը զրկված է եղել երկարաժամկետ արգելանքի միջոցները վիճարկելու արդյունավետ

դատավարական երաշխիքներից, որը Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում է:

121. Եվրոպական կոնվենցիայի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ մասի հիմքով համաչափության սկզբունքի խախտում կհամարվի նաև, եթե ապահովման միջոցը կամ բռնագանձումը չհամապատասխանի [Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի](#) 31-րդ հոդվածի 5-րդ մասի ձևաչափին, համաձայն որի կոնվենցիայով սահմանված հանցագործություններից ծագած եկամուտները կամ գույքը, որոնք խառնվել են օրինական գույքին, ենթակա են բռնագրավման միայն այն չափով, որը համապատասխանում է գույքի կամ եկամտի հանցավոր ծագմանը: Այս սկզբունքի խախտում կարձանագրվի, եթե ապահովման միջոցը կամ բռնագանձում տարածվի ամբողջ գույքի վրա:

**Օրինակ՝** Հանրային պաշտոն զբաղեցնող անձը իր բանկային հաշվին ունի 5 միլիոն դրամ, որը գոյացել է աշխատավարձից: Որոշ ժամանակ անց մուտագրել է 30 միլիոն դրամ, որը ձեռք էր բերել ժառանգությամբ ստացված բնակարանի վաճառքից: Երկու տարի անց բանկային հաշվին ավելացրել է ևս 10 միլիոն դրամ, որը ստացել էր որպես կաշառք: Որոշ ժամանակ անց գնել է բնակարան 45 միլիոն դրամի չափով: Մեկ տարի անց նրա դեմ հարուցվել է քրեական գործ կաշառք ստանալու հիմքով, որի հանգամանքները ամբողջությամբ նույնական չեն վերը նշված 10 միլիոն դրամի չափով կաշառք ստանալու հանգամանքներին: Քրեական գործի հարուցումից որոշ ժամանակ անց նրա դեմ հարուցվել է վարույթ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքի հիմքով: Վարույթի ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ապահովման միջոց կիրառել բնակարանի նկատմամբ, որի ծագումը չի հիմնավորվել պաշտոնատար անձի օրինական եկամուտներով: Եթե ապահովման միջոցը կիրառվի ողջ բնակարանի նկատմամբ, դա կլինի սեփականության իրավունքի անհամաչափ միջամտություն, քանի որ բնակարանը ամբողջությամբ չի ծագում անօրինական եկամուտներից: Հաշվի առնելով, որ բնակարանը հնարավոր չէ բաժանել օրինական և անօրինական

հասութեան համամասութեամբ, անհրաժեշտ է կիրառել գույքի արժեքի հաշվարկի մեխանիզմ՝ ըստ ՄԱԿ-ի կոնվենցիայի 31-րդ հոդվածի 5-րդ մասի, և ապահովման միջոցը կիրառել կամ բռնագանձումը տարածել բնակարանի շուկայական արժեքի այն մասի նկատմամբ, որը համապատասխանում է օրինական եկամուտով չհիմնավորված հասույթի չափին:

122. Համաչափության սկզբունքը նաև համարվում է խախտված, երբ ապահովման միջոցը (այդ թվում նաև արգելադրման միջոցները քրեական դատավարությունում) սեփականատիրոջը պատճառում է ավելի մեծ վնաս, քան նման միջոցներ սովորաբար պատճառում են: Նման իրավիճակները վերաբերում են ապահովման միջոցի արդյունքում գույքին հասցված վնասին, դրամական միջոցների նկատմամբ արգելանքի պատճառով անձի առողջական վիճակին հասցվող վնասին, իրավաբանական անձի գործունեությանը հասցվող վնասին, և այլ նմանատիպ իրավիճակներին:

**Օրինակ 1.** [Ապստորովին ընդդեմ Բուլղարիայի](#), թիվ 32644/09, ՄԻԵԴ, 07/11/2019):

Քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալների (ամուսիններ) դրամական միջոցների վրա դրվել է արգելանք մեկ տարի ժամկետով: Մեղադրյալները միջնորդել են դրամական միջոցների որոշ մասի նկատմամբ արգելադրումը վերացնելու մասին, որ հնարավորություն ունենային հոգալ իրենց որդու բժշկական ծախսերը, որը ուներ ծանր հաշմանդամություն և կարիք ուներ շարունակական բժշկական խնամքի: Դատարանները այդ միջնորդությանը չէին անդրադարձել, քանի որ օրենքը չէր սահմանում նման բացառություններ: Եվրոպական դատարանը որոշել է, որ Բուլղարիայի օրենքը արդարացիորեն չէր հավասարակշռում հանրային ու մասնավոր շահերը արգելադրման ընթացակարգերում, քանի որ չէր սահմանում բացառություններ կենսական պահանջների համար: Այն հանգամանքը, որ դատարանները չէին քննել մեղադրյալների միջնորդությունը իրենց որդու բժշկական ծախսերի համար գումարի մի մասի նկատմամբ արգելադրումը վերացնելու

մասին, խախտել էր համաչափության սկզբունքը նրանց սեփականության իրավունքը սահմանափակելիս:

**Օրինակ 2.** [Արդյունավետ ընդդեմ Լեհաստանի](#), թիվ 58795/15, 21/12/2021, կետ 67:

Քաղաքացու մեքենայի նկատմամբ կիրառվել է արգելադրում և մեքենան առգրավել է ու տարվել հատուկ պահպանման վայր, որը բացօթյա վայր էր: Դատական քննությունը տևել է հինգ տարի, որի ընթացքում մեքենան գտնվել է արգելադրման տակ: Այդ ընթացքում մեքենայի տեխնիկական վիճակը վատթարացել է այն աստիճան, որ մեքենայի շուկայական արժեքը ընկել է մի քանի անգամ և մեքենան, փաստորեն, դարձել է օգտագործման համար ոչ պիտանի: Ըստ Եվրոպական դատարանի, թեև դատական վարույթի սկզբում մեքենայի սկզբնական արժեքը համաչափ էր վնասին կամ սահմանվելիք տուգանքին, վարույթի վերջում մեքենայի արգելադրման արդյունքում մեքենայի շուկայական արժեքը մոտ հինգ անգամ նվազել էր: Մեքենայի շուկայական արժեքի նվազումը վերագրվում էր պետական մարմնի անբարեխիղճ վերաբերմունքին: Ըստ Եվրոպական դատարանի՝ որպեսզի արգելանքի միջոցը համաչափ լինի Թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածին, արգելանքի արդյունքում պատճառված վնասը չպետք է լինի ավելին, քան այն վնասը, որն անխուսափելիորեն առաջանում է արգելանքի պատճառով:

**Օրինակ 3.** [B.K.M. Lojistik Tasmicilik Ticaret Limited Sirketi-ն ընդդեմ Ալբանիայի](#), 42079/12, 17/01/2017, կետ 49):

Մաքսանենգության համար ձերբակալվել է բեռնատարի վարորդը, ում առաջադրվել է մեղադրանք ու նա դատապարտվել է: Բեռնատարը բռնագրավվել է, թեև բեռնատարը պատկանում էր մասնավոր կազմակերպությանը, որի առնչությունը հանցագործությանը չի հիմնավորվել: Եվրոպական դատարանը գտել է, որ Օրենքի անխտրական կարգավորումը, որի համաձայն նման

հանգամանքներում փոխադրամիջոցները, անկախ սեփականությունից, ենթակա են բռնագրավման, չէր համապատասխանում ԹԻՎ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաչափության պահանջին:

123. Այսպիսով, ապահովման միջոցները և բռնագանձումը տարածվում են՝ անօրինական ծագում ունեցող **ամբողջ** գույքի և եկամուտների վրա, ապօրինի ծագում ունեցող գույքից այլ գույքի փոխակերպված կամ վերածված ամբողջ գույքի կամ եկամուտների վրա, օրինական գույքին միախառնված անօրինական գույքի վրա՝ **միայն անօրինական գույքի զանգվածի կամ համարժեք արժեքի չափով**: Նաև, ապահովման միջոցը և բռնագանձումը պետք է կիրառվեն վարույթով նախատեսված բռնագանձման ենթակա գույքին համարժեք ծավալի վրա՝ համարժեք տևողությամբ, իսկ ապահովման միջոցների պատճառով գույքին հասցված վնասը չի կարող լինել ավելին, քան այն վնասը, որը որպես կանոն հասցվում է նման միջոցի կիրառումից: